

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Այս աշխատանքը արտաևագրված է «Արեդապագարձեական ճամայիցներ»
ոչ առևտրային իրավասության 3.0 արտանագրավ

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY NC) license.

Դու կարող եք.

պահպանել և տարրածել նյութը ցույց գովայացն ձեռնադիր կամ նյութը
մերժակալել կամ ձայնագրել առանձինություն ստեղծելու համար ծրագրելու

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format;

Adapt — remix, transform, and build upon the material

Г. Караджян—С. Т. Аркомед. «А все таки она движется»,
драма в 4-х действиях из жизни политических ссыльных.

ԳՐԱՎԱՐԴՅՈՒԹՅՈՒՆ ԲԱԼՈՐ ՎԵՐԿՐՈՅԻ, ԾԽԱՅՔ!

ԲԱՅՑ ՅԵՎ ԱՅՆՊԵՍ Ա՛Յ ՏՐԴՎՈՒՄ Ե...

(E PUR SI MUOVE...)

ԴՐԱՄԱ ՉՈՐԾ ԴՐԱՄ.

(ՍԻԲԻՐԻ ԳՈՂԱՔԱԿԱՆ ԱԳԱՄՐՅԱՆՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՄՈՏ
ԱՆՁՅԱԼԻՑ)


ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՏՅՈՒԴ

Գ Ր Ե Տ

ԳԵՎՈՐԳ ԶԱՐԱՅՅԱՆ

(Ա. Տ. ԱՐԵՎՈՒՆԻՔ)

ԹԻՖԼԻՍ—1925



Г. Караджян—С. Т. Аркомед .А все таки она движется”,
драма в 4-х действиях из жизни политических ссыльных.

ԿՐՈՒՏԱՐՔԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԱԲԵՐԻ, ՄԻԱՅԻ

891.99

Ն

ԲԱՅՑ ՅԵՎ ԱՅՆԹԵՍ Ա՛ ՀԱՐՃՎՈՒ Ե...

(E PUR SI MUOVE...)

ԴՐԵՄԱ ԶՈՐՈ ԴՈՐԸ.

(ՍԻԲԻՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԳՍՈՐՅԱԼՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՄՈՏ
ԱՆՑԱԼԻՑ)


ՀԱԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՏՅԱԼԻԴ

Գ Ր Ե Ց

ԳԵՂՈՐԻ ԴՐԱՋԱՆ

(Ս Տ. ԱՐԿՈՄԵԴ)

ԹԻՖԼԻՍ-1925



Главлит № 145

Тифлис.

Тираж 1000.

Ժ. Տ. Գ. Խ. Պալիղը. բաժնի 4-րդ տպարան, Պուշկ. փող. № 3.

ՆՎԵՐ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԻՆ

Անմոռանալի Լիդա,

Քեզ հետ Սիրիրի բանտերում ծանոթացա. լավ ճանաչեցի քեզ. դու իմ ուշադրությունն առանձնապես գրավեցիր, դու մի անորինակելի անձնվիրությամբ նվիրված եյիր այն իդեալներին, վորոնք մեր ընդհանուրիս իդեալներն եյին: Քո միակ մտադրադմունքն եր բանվորությունը, նրա դատը և նրա պատմական միսսիան: Դու չափազանց ազնիվ և մաքուր անձնավորություններից եյիր, գրավիչ, գեղեցիկ բնավորությամբ, ինչպես գեղեցիկ և գրավիչ եր և քո արտաքինը: Քեզ պես իդեալիստ մարդիկ շատ քիչ եմ պատահել կյանքիս մեջ. դու կարծես մեր աշխարհից չեյիր, այլ ծնված եյիր մի ուրիշ ավելի բարձր աշխարհի համար: Քո իդեալիզմը տեղ չեր գտնում ներկա բուրժուազական կյանքի անիրավ և անարդար պայմաններում: Այդ պատճառով դու անկարող յեղար տանել և հաղթահարել քեզ հասած գժբաղդությունը: Վորքան յես աշխատեցի մյուս ընկերների հետ միասին ամոքել քո դառը վիճակը, ոգնել դուրս գալու քեզ խեղտող կոշմարից, վոչինչ չեղավ, բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Կյանքի անողոք հարվածներին չդիմացավ քո նազելի, քնքույշ կաղմվածքը: Դու հավիտյան բաժանվեցիր մեզնից, թուղնելով մեզ ընկերներիս տխուր և վշտահար դրության մեջ: Բայց դու յերիտասարդական կյանքդ նվիրեցիր ամբողջապես բանվորության մեծ դատի պաշտպանության: Դու անմոռալի յես, ինչպես անմոռանալի յեն ինձ համար Շուրան *), կլարան **), Ռիբկան ***): և այլ պրոլետա-

*) Դրամայի հերոսուհին, այժմ վախճանված. նրան գնդակահարեցին Մոսկվայում 1908 թվին: Նրա խսկական անունն եր Ալեքսանդրա Սեվաստյանովա:

**) Կլավդիա Արկադիենիա Ֆրանչեսկի (հայրական ազգանունը—կոգան). սա Թիֆլիսից աքսոր գնալով Սիրիր իր ամուսնու հետ՝ վախճանվեց թոքերի բորբոքումից Արևելյան Սիրիրի Ցակուտսկի նահանգում 1903 թվին:

***) Ռիբկա (Ռիբեկա) Գորովից—ողեսացի որիորդ, մանկավարժուհի, վորին Սիրիրից արտասահման փախչելու ժամանակ 1904 թվին ձերբակալեցին. ինչ յեղավ նրանից հետո նա, կենդանի՞ յե, թե մեռած, վոչ մի կերպ հայտնի չեղավ ինձ:

բական հերոսուհիները, վորոնց հետ տասնյակ տարիների ընթացքում առիթ և յեղել ինձ միասին պայքարելու հեղափոխական քաղաքական ասպարեզում բանվորական դեմոկրատիայի բոլոր տեսակի թշնամիների դեմ:

Քեզ եմ նվիրում, անմռաց Լիդա, և քո մյուս ընկերուհիների—Շուրայի: Կլարայի, Ռիբկայի և այլոց անմեռ հիշատակին այս դրամատիքական ետյուդը, վորը ձեր կյանքի գովքն և անում, ձեր իդեալները յերգում:

Հարգանք ձեր մեծ հիշատակին:


Դ. Ղարաջյան
(Ս. Տ. Արգուման)

Հուլիս, 1921 թ. Թիֆլիս.

Գ Ա Բ Ե Ա Զ Ա Կ Ե Վ

1. Լիզա Կրասնովա, 25 տարեկան, հրաշալի կաղմվածքով, յերկար թուխ մաղերով, սեորակ աչքերով, գեղեցկատեսիլ ինտելիգենտ կին:
2. Շուրա (Ալեքսանդրա Սեվաստյանովա), Լիզայի մտերիմ ընկերուհին, նրա հասակակից, որիորդ գրավիչ դեմքով:
3. Մաքսիմ Պետրովիչ Լուկիանով, Լիզայի ամուսինը, 32 տարեկան, լրտես, ագենտ-պրովոկատոր, ճաղար մարդ:
4. Գրիգորի Բայկալով, յերիտ. ինտելիգ. | Կոմիտեյի անդամներ
5. Վանյա, յերիտասարդ բանվոր |
6. Մարտոն, 35 տարեկան բաղաբական աքսորյալ, կովկասցի:
7. Ժակ Մակլին, բանվոր «բունդիստ»:
8. Պավլուշա, բանվոր (գյուղացի) ո. բ.:
9. Պրոկուրոր Ստանիսլավսկի:
10. Պալով, ժանդարմական գնդապետ:
11. Բանտային տեսուչ:
12. Բանտային վերակացու:
13. Պարաշնիկ Վասկա:
14. Ժանդարմ Կազակով:
15. Անաստայա Պավլովնա, բաղաբական աքսորյալան, ֆելտշերուհի-ժանկարձուհի:
16. Ավղոտյա, Լիզայի և Շուրայի բնակարանի տիրուհին, տարիքով կին:

Ժանդարմերյայի շեֆ, բաղաքապետ, բանտապետ, վոստիկաններ, զինվորներ և այլն:



ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ԿՐԸՆՈՑԱՐՈՒԿԻ ԿԵՆՏՐ. ԲԱՆՏԱՔԻՄ

Բանտի կանցելարիայի մի սենյակը, վորտեղ տեղի յեն ունենում ժանդարմական հարցաքննությունները։ Սենյակում կան, մի գրասեղան և մի քանի աթոռներ։ Պատից կախված է Նիկոլայ Ա կայսրի պատիկերը։

Ժանդարմական գնդապետ Պապով և պրոկուրոր Ստանիսլավսկի։

Դնդապետը հաղորդում է պրոկուրորին գաղտնի կազմակերպության ձերբակալման մանրամասնությունները։

ԺԱՆԴ. ԳՆԴ. ՊԱՊՈՎ. Զերդ գերազանցություն, գաղտնի այս կազմակերպության ձերբակալումը մեծ նշանակություն ունի. ձերբակալված են քաղաքի կենտրոնական կոմիտեյի գաղտնի տալարանը և կոմիտեյի ղեկավարող անդամները։

ՊՐՈԿ. ՍՏԱՆԻՍԼԱՎՍԿԻ. — Ամբողջ կազմն և արդյոք ձերբակալված։

Փ. Գ. ՊԱՊՈՎ. — Վոչ, առայժմ միայն մի քանիսը, կոմիտեյի գլխավոր անդամները. մյուսների ձերբակալության հետապնդումը շարունակվում է։ Մեր աղենտ Մաքսիմը ներկա դեպքում մեծ գործ կատարեց.

ՊՐՈԿ. ՍՏԱՆԻՍԼ. — Ի՞նչպես։

Փ. Գ. ՊԱՊՈՎ. — Այո, նա վորապես մեր գաղտնի աշխատակից-ագենտ՝ հանցավոր կազմակերպության ամենամոտ մարդը դարձավ. նա ղեկավարներից եր և կոմիտեյի ոլատասխանատու անդամներից մեկը. նա ամուսնական

կապով ասլրում եր կոմիտեյի կին-անդամ Լիզա Կրասնովայի հետ։ Այս բոլորը մեզ հնարավորություն տվեց կազմակերպության բոլոր դադանիքները իմանալ, կազմալուծել հանցավոր ընկերակցությունը։

ՊՐՈԿ. ՍՏԱՆԻՍԼ. — Շատ լավ, շատ լավ։

Փ. Գ. ՊԱՊՈՎ. — (Չանգահարում ե. մտնում ե պահապան ժանդարմ Կազակով)։ Լսիր, կազակով, պետք ե հերթով բերել այստեղ քաղաքական բանտարկյալներից — բանվոր Վանյախին, Դրիգորի Բայկալովին, Լիզա Կրասնովային, Ալեքսանդրա Սևվաստիանովային, Ժակ Մակլինին. հասկացնո՞ւ։

ԿԱԶԱԿԻՆՎ. — Հսում եմ, Զերդ Բարձրապատվություն (դուքս ե զնում)։

Փ. Գ. ՊԱՊՈՎ. — (Պրոկոպովն)։ Հարցաքննության առաջին որը նրանցից վոմանք հարցերին վոչ մի պատասխան չեյին տալիս կամ տալիս եյին բոլորովին կողմնակի պատասխաններ. մյուսները հրաժարվեցին նույնիսկ արձանագրության տակ ստորագրել։

ՊՐՈԿ. ՍՏԱՆԻՍԼ. — Դա, ինչպես ձեզ հայտնի յե, մի սիստեմ ե, վոր ընդունված ե հեղափոխական վորոշ շըրջաններում, լոել, պատասխաններ չտալ, ցուցմունք չներկայացնել։

Փ. Գ. ՊԱՊՈՎ. — Այդպիսով անհնարին ե լինում գործի վրա լույս սփռել։

ՊՐՈԿ. ՍՏԱՆԻՍԼ. — Ասկայն ամեն հնարավոր միջոցներ գործ դնելու յե, ազգելու նրանցից ավելի թույլիրի և տատանվողների վրա, խոստովանություններ և փաստեր ստանալ նրանցից։ (Մտնում ե օսմանյան ժանդարմ Կազակովի յեզ ըանտային վերակացվի հսկողության տակ)։

Փ. Գ. ՊԱՊՈՎ. — (Վանյախին)։ Առաջ յեկեք սեղանի մոտ, նստեցեք (Վանյախ նստում ե աթոռին)։ Դուք այս անգամ պ. պըոկուրորի ներկայությամբ պետք տաք առանց այլևայլության ճիշտ ցուցմունքներ։ Մենք հաստատ

տեղեկություններ ունինք, վոր դուք դադա՞նի հանցավոր ընկերության և կոմիտեյի աշխի ընկնող անդամներից եք: Ի՞նչ կասեք: (Դնդ. Պապովը պատրաստվում և զբնէ իր ստացած պատասխանները):

ԲԱՆՎՈՐ ՎԱՆՅԱ. — (Համարձակ). Յես վոչինչ ասելիք չունեմ. յեթե դուք սրա կամ նրա մասին տեղեկություններ ունեք, այդ ինձ չի վերաբերում. վարվեցեք ձեր ժանդարմական ու լրտեսական տեղեկությունների համաձայն (զնդ. Պապովը շտապ գրում և շարունակ):

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Խլոխտ ձայնով). Քաղաքավարի խոսեցեք, դուք կանոնած եք իշխանության ներկայացուցիչների առաջ, վորոնցից կախված ե ձեր կյանքն ու ապագան: Ասացեք, դուք կազմակերպության կոմիտեյի անդամ եք և վարել եք հակակառավարչական հանցավոր դործունեություն, վարչեղ, յերբ և վոր դեպքերում: Իմացեք, վոր մեզ բոլորը հայտնի յե:

Բ. ՎԱՆՅԱ. — (Վճռականապես). Յես ձեզ արդեն միանդամ հայտնեցի, վոր ձեր վոչ մի հարցին պատասխանողը չեմ:

ՊԲ. ՍՏԱՆԻՍԼ. — (Իշխանական ձայնով). Դուք պետքեն իմանաք, վոր ձեր այդ սիստեմատիկ բացասությամբ սաստիկ ծանրացնում եք ձեր դրությունը:

Բ. ՎԱՆՅԱ. — Մեր բանվորներիս դրությունը յերբեք ավելի թեթև չի յեղել, քան այժմ հհետո՝ բանտային ամենածանր պայմաններում, ինչպես դուք կարող եք կարծեք, ալ սպառկուրոր:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Ռւեկմն դուք վոչ մի հարցին չեք ուզում պատասխանել, դուք բացասում եք ամեն ինչ: Ստորագրեցեք այս արձանագրության տակ, վոր չեք ուզում վոչ մի հարցին ել պատասխան տալ:

Բ. ՎԱՆՅԱ. — Յես վոչ մի բանին ել ստորագրողը չեմ:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Զայլացած). Դա արդեն շափականց ե:

ՊՐ. ԱՏԱՆԻՍԼ. — (Բարձրածայն) Այս արդեն անհնարին եւ և անյերկակայելին:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Դուք չեք մտածում այն մասին, թե ինչ խստություններ կը դործադրվի ձեր վերաբերմամբ:

Բ. ՎԱՆՅԱ. — Յես արդեն ասացի և ավելորդ եմ համարում կրկնել:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Կոպտացար). Դեհ, գնացեք, հեռացեք. ձեր վարմունքի հետեւանքը դուք շուտով կը ճաշակեք (զանզանարութ և, ներս են մտնում Կազակովս վեռակացվի հետ) Կազակով, վերակացու, տարեք սրան իր կամերան, հետեւյալը թող գա, Գրիգորի Բայկալովը (դուքս են զնութ):

ՊՐ. ԱՏԱՆԻՍԼ. — Այս տպետ, հազիվ գրագետ բանվորները շատ համառ և աներես են լինում:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Մաստիկ հանդուզն են, մանավանդնրանք, վորոնք շփոքելով ավելի ինտելիգենտ հեղափոխականների հետ, անցել են հեղափոխական բովով: (Դրիգորի Բայկալով ժանդարմի յեվ վերակացվի ուղեկցությամբ):

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Մոտեցեք, ալ. Բայկալով, համեցեք, նստեցեք. (Բայկալովը նստութ և). Դուք իրավաբանական ֆակուլտետի ուսանող եք յեղել Դադանի համալսարանում, այդպես չե՞:

ԲԱՅԿԱԼՈՎ. — Այս:

ՊՐ. ԱՏԱՆԻՍԼ. — Ավարտել եք իրավաբանական ֆակուլտետը:

ԲԱՅԿԱԼՈՎ. — Վո՞չ, վերջին կուրսումն եյի. պատրաստվում եյի գնալ այս տարի. ավարտելու, անսպասելիորեն ձերբակարիցի. դա խանդարեց: («Անսպասելիորեն» խոսքը ծիծառ և առաջ բերութ):

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Հեղնորեն). Ուրեմն դուք կարծում եք, վոր «անսպասելիորեն» են բանտարկել ձեզ:

ԲԱՅԿԱԼՈՎ. — Այս, այդ բանում ավելի քան համոզված եմ:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Ուրեմն դուք պետության հանդեպ ձեզ հանցավոր չեք զգում, հակակառավարչական վոչ մի քայլ կամ դործ չեք կատարել:

ԲԱՅԿԱԼՈՎ. — Ամենեին:

ՊՐ. ՍՏԱՆԻՍԼ. — Մեղ ամեն ինչ հայտնի յե ձեր վերաբերությամբ, թե դուք ինչ դեր եք խաղացել, ինչպիսի դործեր եք կատարել որինական պետության դեմ:

ԲԱՅԿԱԼՈՎ. — Պետականության դեմ յես վոչինչ չեյի կարող անել. այդ բանին ընդունակ են միայն անարխիստները, իսկ յես անարխիստ չեմ:

ՊՐ. ՍՏԱՆԻՍԼ. — Վոչ պետականության դեմ, այլ գոյություն ունեցող որինական պետության դեմ, միապետության դեմ: Հեղափոխականներդ ձգտում եք տապալել միապետությունը և փոխարինել այն հանրապետությամբ:

ԲԱՅԿԱԼՈՎ. — Դուք իրավունք ունեք յենթադրություններ անել և ձեր ստացած տեղեկությունների վրա հիմնվելով սրա, նրա վրա մեղադրանքներ բարդել:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Զայնը քաշօնացնելով). Այստեղ մենք չենք յեկել փիլիսոփայական հարցերով զբաղվելու: Դուք մեղադրվում եք հակապետական ալլ և այլ հանցանքների մեջ, գաղտնի կազմակերպության և կոմիտեյի անդամ և դեկավար լինելու մեջ. ասացեք առանց այլ հայլության, համարնեմ եք ձեզ մեղավոր:

ԲԱՅԿԱԼՈՎ. — Յես վոչ մի բանում ինձ մեղավոր չեմ ճանաչում:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Զայրացած). Այդ դեպքում ստորագրեցեք այս արձանագրության տակ (Բայկալովը կարդալուց հետո՝ ստորագրում ե):

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Զանգահարում և. մտնում են ժանդարմը յեվ վերադաշուն). Թող գա հետեյալը — Լիզա Կրասնովան: (Նրանք տանում են Բայկալովին):

ՊՐ. ՍՏԱՆԻՍԼ. — Բայկալովը դիպլոմատիական խաղ ե խաղում. նա կարծում է, թե մենք նրան չենք հասկանում:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Այս, նա սովորություններով կտմնում է միայն վարագուրել իրան։ (Մտնում և Հիզան համարձակ քայլվածքով վերակացվի յևլ ժանդարմի շետ, վորոնք իսկույն դուրս են գնում)։

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Որի՞րդ Լիդա Կրասնովա, (պըոկուրողը Հիզային նշան և անում նստելու աթոռի վոա. Լիզան նստում ե) բարեհաճեցեք մեր բոլոր հարցերին ստույգ պատասխաններ տալ։ Դուք կիեվ քաղաքից եք, այդ քաղաքի համալսարանն ավարտած։ Այնտեղ մասնակցել եք հեղափոխական քաղաքական գործունեության, վորպես սոցիալ-դեմոկրատ, վորի համար աքսորվել եք Սիբիր Կրասնոյարսկ քաղաքը. այստեղ ել շարունակեցիք նույն ստորցերկրյա հանցավոր գործունեությունը, վորպես տեղիս կազմակերպության ղեկավար, կոմիտեյի անդամ և նույնիսկ գաղանի տպարանի գրաշար։ Հանձն եք առնում այս մեղադրանքները, այս, թե վոչ։

ԼԻԶԱ. — Նման հարցերին յես վոչ մի կերպ ոլատասխանել չեմ կարող։

ՊՐ. ԱՏԱՆԻՍՅ. — (Մեղմությամբ). Դուք ինտելիգենտ լին եք և վորպես այդպիսին՝ պատվազգաց և ազնվամիտ. խոստովանվեցեք ազնվությամբ բոլորը, դուք այդպիսով միայն ձեր վիճակը կը թեթևացնեք։

ԼԻԶԱ. — Եմ անձնական բարեկեցության և վիճակի մասին յես յերբեք չեմ մտածել. ինձ անհնարին ե ձեր հարցերին ոլատասխանել. կրկին խնդրում եմ ազատել ինձ նման հարցերից։

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Պատասխանատվության կանչված պետական հանցավորների հարցաքննությունն և կատարվում այստեղ և դուք պարտավոր եք վորոշ հարցերին պատասխան տալ կամ չտալ։

ԼԻԶԱ. — Ահա և հայտնում եմ, վոր վորոշ հարցերին պատասխան չեմ կարող տալ։

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Ձեր հայրական աղդանունն ե Կրաս-

Նովա. ասացնք՝ ի՞նչ հարաբերությունների մեջ եք յեղել Մաքսիմ Լուկյանովի հետ:

ԼիԶԱ. — (Փոքր ինչ շփոթված): Ի՞նչ կապ ունի այդ հարցը ձեզ զբաղեցնող գործի հետ:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Դա սերտ կապ ունի այդ գործի հետ. ամուսնական կենակցության մեջ եյթք Մաքսիմ Լուկյանովի հետ, այնպես չե՞:

ԼիԶԱ. — Այս, ի՞նչ եք կամենում դրանով ասել:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Դուք զիտեյիք, վոր նա դադունի կաղմակերպության մեջ աչքի ընկնող դեր եք կատարում և կոմիտեյի պատասխանատու ղեկավարներից մեկն եք:

ԼիԶԱ. — Այդ յես չդիտեմ և վոչինչ չեմ կարող ասել այդ մասին:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Հեգնութեն): Հըմ, վոչինչ չդիտեք, վոչինչ չեք կարող ասել: Դուք ներկայումս պատճառավոր եք, անցյալում Մաքսիմ Լուկյանովից յերեխա ունեցել եք դարձյալ:

ԼիԶԱ. — (Շփոթված, ըստոքի ձայնով): Խնդրում եմ մի թույլ տաք ձեզ ամուսնական ներքին կյանքին վերաբերյալ հարցեր շոշափելու:

ՊՐՈԿ. ՍՏԱՆԻՍԼ. — Նման մասնավոր հարցերը միայն նպատակ ունեն լույս սփռելու հանցավոր դործունեյության բնույթի, տևողության և այլ պարագաների վրա:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Դուք միթե կարող եք բացարձակապես ուրանալ ձեր հակապետական գործունեյությունը կիեվում և այստեղ՝ կրասնոյարսկում, վոր դուք բաղաքան բեցիդիվիստ եք, կոմիտեյի անդամ, դրաշար և այլն:

ԼիԶԱ. — Դուք կրկնում եք նույն հարցերը, վորոնց պատասխանելուց յես արդեն հրաժարվեցի:

ՊՐ. ՍՏԱՆԻՍԼ. — Սպասելի յեր, վոր դուք, մայր լինելու ծանր դրության մեջ գտնվելով՝ ավելի և չեյթք ծանրացնի ձեր վիճակը. սակայն ձեր վերաբերմունքը ցույց է տալիս բոլորովին հակառակ:

ԼիջԱ. — Տարրական մարդասիրությունը պահանջում էր կնոջ այս դրության մեջ բանտ չդնել և տանջանքների չենթարկել:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Բորբոքված): Զեր մարդասիրական խրատները ձեզ համար պահեք. մենք զիտենք, թե ինչ ենք անում (խստիվ զանգահարում ե. ժոնում են ժանդարմը յեվ վերակացուն): Տարեք այս կնոջը, բերեք այստեղ Ալեքսանդրա Սեվաստիանովային: (Դուքս են զնում):

ՊՐ. ՍՏԱՆԻՍԼԱՎ. — Զարմանալի ֆրազյորներ են այս ոոցիալիստները:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Յեվ ֆանտազյորներ, կավելացնեմ յես, անտանելի անձնապաստան և հանդուղն:

(Մտնում ե Շուրան ժանդարմի յեվ վերակացվի ողեկցությամբ):

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Համեցեք ավելի մոտ: (Շուրան համարձակ քայլերով մոտենում ե, զրասեղանի առաջ կանգնում): Դուք մեղադրվում եք ծանր հանցանքների մեջ, վորպես Լիզա Կրամնովայի մոտ ընկերուհի և գործակիցը. դուք մասնակցել եք հանցավոր կազմակերպության հեղափոխական բոլոր գործերին:

ՇՈՒՐԱՆ. — Ամենեին. ձեր տեղեկությունները իմ մասին սխալ են և բոլորովին անհիմն:

ՊՐ. ՍՏԱՆԻՍԼԱՎ. — Մենք վկաներ ունենք և հաստատ տեղեկություններ:

ՇՈՒՐԱՆ. — Բոլորը սուտ ե. ովքեր են ձեր վկաները, վորն ե ձեր հաստատ տեղեկությունների աղբյուրը:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Բորբոքված): Այդ ձեզ բնավ չի վերաբերում. ուղղակի պատասխանեցեք, դուք ձեզ հանցավոր ճանաչում եք, թե վոչ:

ՇՈՒՐԱՆ. — Ամենեին վոչ. յես չդիտեմ, ինչ հանցանքների մասին ե այստեղ խոսքը:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Այս հանցանքների մասին, վոր հայրենիքի և դահի դավաճան քաղաքական մի կազմակեր-

պություն, վորի անդամներից մեկը հանդիսանում էք դուք, նպատակ ե դրել ամենաանարդ, ապորինի ճանապարհով և միջոցներով խռովություններ և խլրտումներ առաջ բերել միազետական ռեժիմը տապալելու համար։ Ահա ձեր վոճրագործությունը։

ՇՈՒՐԱ. —Դուք զանազան բանսարելու, ստոր, վարձեկան ազենտների և լրտեսների հաղորդած տեղեկությունների հիման վրա մեղադրական ակտեր եք կազմում։ Վորքան նրանք արժեք կարողեն ներկայացնել արդարադատության տեսակետից։ (Պրոկորորը յեւ ժանդարմագետը սաստիկ զայրացած)։

Փ. Գ. ՊԱՊՈՎ. —(Բարձրաձայն, կոպտությամբ). Ինչպես եք համարձակվում այդպիսի լեզվով խոսելու. իմացեք, վոր մեր «արդարադատությունը» գիտե ձեզպեսներին ըստ արժանույն պատժելու (շտապ կազմում և արծանազությունը)։ Ահա, ստորագրեցեք այս պրատակոլի տակ, վորի մեջ արձանագրիվ են ձեր պատասխանները։

ՇՈՒՐԱ. —(Վճռականապես). Յես չեմ ստորագրի։

Փ. Գ. ՊԱՊՈՎ. —(Բարձրաձայն կանչում և). Կազադով, (Ներս են մտնում Կազակովը յեւ վերակացուն). Հեռացրեք իսկույն այս բանտարկյալին, թող գա հետեւյալը (Կազակովը կոպտությամբ քոնում և Շուրայի թեվից, իսկ Շուրան ոյժ գործ դնելով ծնորի թափով ազատում և իր թեվը բողոքի արտահայտությամբ)։

Փ. Գ. ՊԱՊՈՎ. —(Պրոկորորին). Որինական միջոցներով սնննարին ե այս մարդկանց հետ վարվել. ամենախիստ, ճնշիչ միջոցները կարող են միայն սրանց խելքի բերել։

ՊԲ. ԱՏԱՆԻՍԻ. —Համաձայն եմ. սլատմական ծայրահեղ միջոցները թերեւ կարող են ազդել նրանց վրա։ (Ներս են ըերում Ժակ Մակլինին)։

Փ. Գ. ՊԱՊՈՎ. —Մոտեցեք, ժակ Մակլին։ Դուք ազդով հրյա յեք. ձեր իսկական անսւնը Ցանկել ե, բայց տ-

նունը ֆրանսերենի փոխված ժակ եք դարձրել. դուք պատկանելով հրյական «Բունդ» կոչված հանցավոր կուսակցության, յեռանդուն մասնակցություն եք ունեցել տեղական ու. դ. հակակառավարչական կազմակերպության: Ի՞նչ կարող եք ասել:

ԺԱԿ ՄԱԿԼԻՆ. — Յես վոչինչ չունեմ ասելու. այդ դուք եք ասում, վոր այդպես եւ:

Փ. Գ. ՊԱՊՈՎ. — (Բարձրածայն). Այսաեղ կատակ չեն անում ձեզ հետ. հրյաները հանդիսանում են մեր կայսերական իշխանության ամենալինաստկար տարրը. դուք ձեր ազգայինների մեջ բացառություն չեք կազմում:

ԺԱԿ ՄԱԿԼԻՆ. — Պարոն ժանդարմ, յես ել կատակ չեմ անում, վոր դուք անտիսեմ... («անտիսեմիտ» բառը չեն թույլ տալիս վերջացնել):

Փ. Գ. ՊԱՊՈՎ. — (Աբագ կտրելով նրա խոսքը). Զայնդ կտրիր, հանդիւնդն արարած, յես ժանդարմ չեմ...

ՊՐ. ԱՏԱՆԻՍԼ. — (Հրամայաբար). Այսպիսի նախալներին պետք է կարցերում փակել և բողդի հարվածներով ուղղել: Հեռացրեք սրան այստեղից:

Փ. Գ. ՊԱՊՈՎ. — (Սաստիւ զանգահարում ե, մտնում են կազակով յեվ վերակացուն). Տարեք սրան իր կամերան (դիմելով վերակացվին). ասացեք բանտապետին, վոր սրան բանտային ամենախիստ ռեժիմի տակ պահե:

ԺԱԿ ՄԱԿԼԻՆ. — (Դուրս գնալիս դոան շնորհին հեղութեն բարձր ծիծաղում ե) հա, հա, հա (դուռ և գնում):

Փ. Գ. ՊԱՊՈՎ. Տեսեք, ինչ լիր արարած ե:

ՊՐ. ԱՏԱՆԻՍԼ. — Նախալությունը ջնուղների ազգային հատկանիշն եւ:

Փ. Գ. ՊԱՊՈՎ. — (Մի քանի վայրկյան թղթեր ե քըրքըրում յեվ ինչ վոր նշանակում ե արձանագրությունների մատյանում. հետո զանգահարում ե, ներս ե մտնում կազմիով). Կազակով, կանչիր այստեղ բանտարկյալ մեր ազենտ Մաքսիմ Լուկիանովին:

ԿԱԶԱԿՈՎ. — Լսում եմ, ձերդ բարձրապատվություն (դուքս և զնուած):

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Այսոր ել քննությունը բոլորովին ապարդյուն անցավ. այս կատաղի մոլեուանդ մարդիկ այնպիսի վնասակար միջատներ են, վորոնց միայն պետքն ամենաարմատական միջոցներով բնաջինջ անել:

ՊՐ. ՍՏԱՆԻՍԼ. — Ագենտ Լուկիանովի վկայություններն ու ցուցմունքները կարող են անբավարար համարվել, յեթե չկան այլ վկաների ցուցմունքներ և թե հենց իրենց հանցավորների միջից սրա կամ նրա խոստովանությունները:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Բոլորովին աներկրա պետքե համարել ագենտ Մաքսիմի վկայությունները: Նա ամբողջապես նվիրված է միապետության շահերին և ապացուցել է իր հայտատարմությունը. Նա դարդացած ինտելիգենտ և ազնիվ մարդ է, մի բան, վոր ավելի վստահություն և հավատ ե ներշնչում դեպի ինքը:

ՊՐ. ՍՏԱՆԻՍԼ. — Այդ այդպես ե, սակայն արդարադատությունը չե կարող բավարարվել միայն մեկի և այն ել ծառայողի, նույնիսկ վստահելի համարված սլաշտոնյայի վկայություններով:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Պետքե միայն պահանջել ագենտ Մաքսիմից ստուգել և վերաստուգել իր ներկայացրած տեղեկությունները և ցուցմունքները և ըստ այնմ գործին ըթացք տալ: (Այդ ըստելին Մաքսիմը մտնում ե յեվ ակնածությամբ զլուխ և տալիս իր իշխանակորներին):

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — (Սիրալիր). Բարե, Մաքսիմ Պետրովիչ, նստեցեք, խնդրեմ. հա, ի՞նչպես եք կամերայում, վակված՝ հո շատ չե՞ք նեղվում:

ՄԱՔՍԻՄ. — Վո՞չ, ձերդ բարձրապատվություն. յես բոլորովին աղատ եմ ինձ զգում, հենց այնպես, ինչպես իմ բնակարանում. աղատ դուքս եմ գալիս, զբոսնում եմ և լավ սնունդ ստանում:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Մաքսիմ Պետրովիչ, չարագործները խռովը մեկ են արել — ցուցմունք չտալ, վոչինչ շասել Հանցանքի խոստովանություն թվում ե, թե անհնարին և սպասել նրանցից:

ՊՐ. ՍՏԱՆԻՍԼ. — Այդ պատճառով, Մաքսիմ Պետրովիչ, ձեզ վրա խիստ պատասխանատվություն ե ընկնում ձեր տված տեղեկությունների համար, չինի թե նրանք խտացրած կամ գունավորված լինեն:

ՄԱՔՍԻՄ. — Ձերդ գերապատվություն, վորպես մասնակից դադանի գործունեության՝ իս ներկայացրած դեպքերը և փաստերը յես բոլորովին ճշտությամբ եմ հաղորդել:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Այդ մասին մենք վոչ մի կասկած չունենք. այնուամենայնիվ սխալմունքներ և թյուրիմացություններ կարող եյին տեղի ունենալ:

ՄԱՔՍԻՄ. — Համենայն դեպս շինծու, հնարովի բան չե կարող լինել իմ տված տեղեկությունների մեջ:

ՊՐ. ՍՏԱՆԻՍԼ. — Հենց թեկուզ այն պատճառով, վոր անգիտությամբ սխալմունք կամ թյուրիմացություն կարող եր տեղի ունենալ՝ պետք նորից ճշտել, ստուգել ձեր տվյալները:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Յեվս առավել ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր մենք չունենք այլ տեսակի վկայություններ և ցուցմունքներ, բացի ձեր ներկայացրած մերկացումները:

ՄԱՔՍԻՄ. Յես կը կատարեմ ճշտությամբ, ինչ վոր ինձնից պահանջվում ե. վոչ մի բան, վոր չե համապատասխանում միապետության շահերին և ձեր հրամանին, չե կարող ինձնից վրիպել:

Ժ. Գ. ՊԱՊՈՎ. — Մաքսիմ Պետրովիչ, ձեզ բանտարկեցինք և յերկար պահեցինք բանտում հասկանալի պատճառով: Մի քանի որից հետո ձեզ բաց կը թողնենք: Աջո-

դություն ենք ցանկանում ձեզ և հույս ենք տածում ձեզ
անձնվեր ծառայության վրա:

ՄԱՅՍԻՄ.—Իմ պատվական իշխանավորներ, բոլորու-
մին վատահ յեղեք ինձ վրա, իմ ամենահաղատակորեն հա-
վատարմության և անձնվիրության վրա նորին կայսերա-
կան մեծության գահին և անսասան՝ իշխանության: (Հա-
վանության նշաններ իշխանավորների կողմից. Ժանդար-
մապետը վերցնուած և իր պորտֆելը, պըոկուրորը յեվ նա-
դուրս են գնում):

ՄԱՅՍԻՄ.—(*Մենակ*). Գործս աջող ե գնում. իշխա-
նավորներս գոհ են ինձնից, յես ել գոհ եմնըանցից. ամե-
նայն շիտակությամբ կը կատարեմ իմ պարտքը. անխախը
ամեն միջոց ներելի յե նպատակին հասնելու համար: Վո-
չընչացնել կրամոլան, միապետության բոլոր թշնամիներին
և դավաճաններին, ահա իմ գործունեյության բարձր նպա-
տակը: Վոչ մի բան չի կարող ինձ այդ բանից շեղել: Յեա
պատրաստ եմ դահճի դեր ստանձնել կրամոլնիկներին գըն-
դակահարելու կամ կախելու, միայն թե իմ և ինձպեսների
գործունեյությունը հաղթանակով պսակվի: Դեհ, ուրեմն
անվախ քայլերով դեպի գործ, դեպի հաղթանակ (դուրս ե
գնում):

Վ Ա Բ Ա Գ Ո Ւ Յ Ռ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Բ Ե Ն Տ Ա Ի Մ

Լիզայի և Շուրայի կամերան մի փոքրիկ մութ սենյակ ե, վորեալ պատերից մեկի վերին մասում առաստաղին կից՝ կա յերկու փոքր լուսանցք. կամերայի դուռը դրսից հաստ փականքով կողպված ե, վորը բանալու ժամանակ շոնչում ե. դուռն ունի փոքրիկ դռնակ (Փորտոչկա), վորը վերակացուն, յերբ հարկավոր ե լինում, բաց ու խուփ ե անում: Խցի մեջ կա յերկու տարուրետ, մի հասարակ կուշետ (թախտ) և մի մահճակալ անկողնով. կա և մի հին փոքր սեղան:

Շուրան բացակա յե, կանչել են բանտի գրասենյակը: Լիզան մահճակալի վրա նստած՝ խորասուղված ե մտածմունքների մեջ: Հանկարծ դրսից դռան փոքրիկ Փորտոչկան կիսով չափ բացվելով մի տումսակ են նետում կամերայի ներսը:

ԼիԶԱ.—(Անհամըերությամբ վերցնում ե տոմսը յեվ նայում): Մաքսիմից ե նամակը: (Կարդում ե մտքում անհամըերությամբ յեվ շփոթված): Այնպիսի վրդովեցուցիչ բաներ ե գրում Մաքսիմը բանտից, վորոնցից կարելի յե միայն ցնորվել: Վերջին ժամանակները դուրսն ել, տանն ել նա այլևս այն չեր, ինչ վոր առաջ. բոլորովին փոխված՝ շատ տարորինակ ե իրան պահում: Չեմ կարող այլևս համբերել, սպասել. Շուրան զիտե այդ բոլորը, պետք ե Մարտոյին ել զրել, Մարտոյի հետ ևս խորհրդակցել այդ մասին: Յես նրան խսկույն կը զրեմ. բացի այդ՝ դրացի ընկեր կալանավորին կը խնդրեմ, պատի թխսկով մյուս կալանավոր ընկերների միջոցով Մարտոյին հաղորդել, վոր այսոր վորեւե կերպ աջողացնի ինձ հետ տեսնվելու ընդհանուր զրոսավայրում:

(Հիզան մոտենում ե պատին յեվ հարեվան կամբայում նստած քաղաքական կալանավորին պատի թխկոցով—զարկի պայմանական նշաններով հենց այնպես, ինչպես հեռագիրն են զարկում—խնդրում և ընկերների միջոցով նոյն ձեվով կամ՝ այլ կերպ հաղորդել Մարտոյին, վոր շատ կարեվոր գործ ունի նրա հետ յեվ անպատճառ հարմարեցնի գալ իրան տեսնելու զբոսանքի ժամին։ Ընկեր կալանավորն իր կողմից նոյն թխկոցով պատասխանում ե Հիզային։

ԼիջԱ.—Ընկերը հայտնում ե, վոր անպայման կը կատարե իմ խնդիրը։

ՊԱՐԱՇՆԻԿՎԱՍԿԱ.—(Այդ միջոցին հսկիչ վերակացուն շոնզալից դուռը ըացում ե, մտնում ե պարաշնիկը, վորը միշտ արեստանտի շորեր ունի հազար, բերելով Հիզայի յեվ Շոտայի համար մեծ շայնիկով յեփ տված ջուր թեյի համար. վերակացուն դրսից դռան շեմքին ձեվի համար հսկում ե, վոր պարաշնիկը զրույցներ շանի կալանավոր Հիզայի հետ. Պարաշնիկը շատ ցած ժայնով)։ Ընկեր, միքանի ըռպե առաջ նամակ դցեցի Փորտոչկայից, նկատեցիք արդյոք։ (Այդ միջոցին պարաշնիկը իր մեծ շայնիկից ջուր ե ածում Հիզայի թեյամանի մեջ)։

ԼիջԱ.—(Նույնպես ցած)։ Այն, շնորհակալ եմ. յես նամակ կը պատրաստեմ հենց այսոր ճաշից առաջ, այնպես արա, վոր հանդիպելով ինձ վերցնես և հասցնես ընկեր Մարտոյին, հասկացա՞ր։

ՊԱՐԱՇՆ. ՎԱՍԿԱ.—Աշքիս վրա. բազարնիկին ձեր պատվիրած մթերքները ձեզ հասցնելու ըռպեյին նամակը կը տաք ինձ։

ԼիջԱ.—Շատ բարի. շնորհակալ ենք քեզնից, ընկեր վասկա, քո մեզ ցույց տված ծառայությունների համար։

ՊԱՐԱՇՆ. ՎԱՍԿԱ.—Ել մենք, քրեականներս ինչու համար ենք, վոր ձեզ քաղաքականներիդ չծառայենք։

ՎԵՐԱԿԱՑՈՒ.—(Դրսից)։ Վասկա, վերջացրու, դուքս

արի շուտով: (Վասկան շտապ դուրս ե զնում: Լիզան, նստելով խելույն սեղանի մոտ՝ սկսում ե նամակ գրել. դուռը դեռ շփակված, շեմքին ինչ վոր խոսակցության միսիսոց ե լսվում վերակացվի հետ: Մարտոն անակնկալ կերպավ ներս ե մտնում կամերա. դուռը կիսով չափ գոց- մում ե:

ԼիջԱ.—(Յած ձայնով): Ա-խ, սիրելի Մարտոն, ի՞նչ- պես յեկար այստեղ. չե՞ վոր արդելված ե, խոտիվ հըս- կում են:

ՄԱՐՏՈՆ.—Հանգիստ կաց, սիրելի Լիզա, բանտի գրեթե բոլոր վերակացուների հետ յես լավ հարաբերու- թյունների մեջ եմ: Յես նրանց բոլորին ել կաշառել եմ: Այդ պատճառով ել վերակացուն ինձ ներս թողեց մի քանի քոսկեյով: Փողը, կաշառքը ի՞նչ չեն անում:

ԼիջԱ.—Պատի «հեռախոսով» հաղորդեցի՞ն արդյոք քեզ ինչ վոր խնդրել եյի:

ՄԱՐՏՈՆ.—Ի՞նչպես չե. հենց խելույն դրանից հետո շտապեցի քեզ հետ տեսնվելու, առանց սպասելու զբո- սանքի ժամին:

ԼիջԱ.—Լավ արեցիր: Յես վերջին որերս սաստիկ անհանգիղու եմ:

ՄԱՐՏՈՆ.—Ի՞նչ ե պատահել. վհրանեղ ե Շուրան:

ԼիջԱ.—Շուրային կանչեցին բանտի կանցելյարիան, գեռ չի յեկել: Մարտոն ջան, Մաքսիմից ստանում եմ աներեակայելի նամակներ: Նրա բռնած ընթացքը, վար- մունքը վերջին ժամանակները լուրջ կասկածներ ե հա- բուցանում, շատ մեծ անհանգստություն ե պատճառում ինձ:

ՄԱՐՏՈՆ.—Ի՞նչ կարող ե լինել. նա այստեղ ամենա- յեռանդուն, գործին նվիրված և վստահելի ընկերներից մեկն ե համարվում:

ԼիջԱ.—Այդ այդպես ե. նա աչքի ընկնող դեր եր խաղում. հենց այդ ել ինձ համբակեց և իմ բախտու

կասլեցի նրա հետ. բայց նրա վերջին ժամանակների տարորինակությունները—դուրսը և թե այստեղ բանտում—սկսել են ինձ հուզել, մտքերս պղտորել:

ՄԱՐՏՈ.—Ունիս վորեե փաստ, հիմք այդպես մտածելու:

ԼԻԶԱ.—Հաստատ բան չունեմ, բայց նրա չարամիտ նկատողությունները, յեզովալուսան լեղուն, յերկդիմությունը, հակասական քայլերը աչքի յեն ընկնում: Յես վոր ավելի մոտ եմ նրան, ավելի լավ եմ զգում և տեսնում այդ բանը, քան մի ուրիշը:

ՄԱՐՏՈ.—Միթե Մաքսիմի նկատմամբ կարող եյլիր դու թույլ տալ, Լիզա, վորեե հանցավոր կասկած:

ԼԻԶԱ.—Շատ դժվար և անտանելի յե այդ, սիրելի Մարտո. բայց ինչ անեմ, վոր նա առիթներ եւ տալիս իմ հոգեկան անդորրությունս խախտելու. զգում եմ, վոր նա ել են մարդը չե, ինչ վոր առաջ:

ՄԱՐՏՈ.—Համենայն դեպս նման դեպքերում համբերություն և լրջմտություն եւ պահանջվում, որ առաջ չտարվել բնազդներով, առանց դրական, անհերքելի փաստեր ունենալու:

ԼԻԶԱ.—Նա այնպիսի բաներ եւ գրում ինձ բանտից, վոր այլես չեմ կարողանում նրան հասկանալ. հավասար դեպի նա սկսում եւ թուլանալ:

ՄԱՐՏՈ.—Ի՞նչ որինակի հտմար:

ԼԻԶԱ.—(Հանում և զըլանից նամակներ). Ահա ինչ ե զրում իր մի նամակում: (Կարդում ե): «Դու կին ես, քո ընկերների ամեն հիմարություններին հավատում ես. նրանց ասածը կամ արածը ավելի նշանակություն եւ ունեցել քեզ համար, քան իմ վորեե խոսքը կամ քայլը. դու զանազան Գրիգորիների և Վանյաների գործիք ու զերին յես յեղել միայն և ուրիշ վոշինչ, նրանց ասածները հալած յուղի տեղ ընդունել» և այլն: Ահա նրա մի ուրիշ նամակի մարդարտանման տողերը: (Կարդում ե).

«ՅԵթե յես կամ դու այժմ բանտում տանջվում ենք, դա շնորհիվ մեր սեփական հիմարությունների և քո պաշտելի ընկերների հանցանքների, վորոնց մասին հիշելը դարձանք եւ միայն հարուցանում իմ մեջ»։ Ահա, սիրելի Մարտն, ինչ բաներ եւ նա գրում վոչ, Մաքսիմը ել են մարդը չե, ինչ վոր եր տռաջ։

ՄԱՐՏՈ. — Շատ հավանական եւ բանտի ազդեցություն տակ նա ջղայնացել եւ և հավասարակշռությունը կորցրել։ Կրկնում եմ՝ անհրաժեշտ եւ մեծ զգուշություն և լրջմտություն բարոյական այդ մեծ հարցում։ (Պատրաստվում ե զնալ)։ Յերկար մնալ այստեղ կարելի չե. հարկավոր ե շտապել. կը տեսնվենք ընդհանուր զբոսավայրում և կը խոսենք դարձյալ այդ մասին։ Քեզ միայն շատ մի տանջիր, փիլիսոփայաբար նայիր կյանքի վրա, սիրելի Լիզա, ցտեսություն։ (Շտապ դուրս և գնում. դուրս շոնզալից զույգում և)։

ԼԻԶԱ. — (*Մենակ*)։ «Փիլիսոփայաբար նայիր կյանքի վրա», ասում եւ Մարտոն. զարմանալի մարդ ե, կյանքի փիլիսոփա և ռեալիստ, թերեւ միակը իմ բազմաթիվ իդեալիստ և հաճախ մետաֆիզիկ ընկերների մեջ։

(Այդ ըովեյին պատի թխկոցով նշան են տալիս. Լիզան զարկի նշաններով հասկացնում ե, թե լսում ե։ Մի քանի վայրկյան դրացի քաղաքական կալանավորը զբաղեցնում ե Լիզային զարկերով, վորի ժամանակ նա ուշադրությամբ լսելով թղթի վրա մատիտով շտապ գրում ե այն, ինչ վոր հաղորդում են. թխկոցը դադարում ե)։

ԼԻԶԱ. — (*Ցնցված ստացած տեղեկությունից*)։ Ո՞, աստվածներ, այս ինչ բաներ եմ լսում։ (Կարդում և կցկտուր յեվ դոդոցուն ծնոքերով)։ «Ընկերներ Գրիգորին, Վանյան հաղորդում են, վոր Մաքսիմը մատնիչ, ագենտապրովետատոր ե յեղած. գործի ամբողջ ընթացքը հաստատում ե այդ. կազմակերպության քննիչ մարմինը անհերքելի փաստերի և ազացույցների հիման վրա այդ յեզրա-

կացության եւ հանդել. ամենքը համոզված են այժմ այդ
բանում:

«Մատնիչ», «ագենտ-պրովոկատոր»... (Լիզան, հա-
զիվ կարողանալով միայն արտասանել այդ խոսքերը՝
զրեթե ուշագնաց՝ ընկնում և աթոռի վրա—սեղանի մոտ-
թուղթը ձեռքից վայր եւ ընկնում. դուռը շոնզալից բաց են
անում. ներս եւ մտնում Շուրան):

ՇՈՒՐԱ. — (Գտնելով Լիզային այդ դրության մեջ):
Ի՞նչ եւ պատահել, Լիզա ջան, ինչու յես այդպես այլայլ-
ված:

ԼԻԶԱ. — (Ճնշված, հազիվ լսելի ճայնով): Ամեն ինչ
վերջացած ե, յես վոչնչացած: Մաքսիմը մատնիչ, ագենտ-
պրովոկատոր:

ՇՈՒՐԱ. — (Անհանգիստ): Ի՞նչ ե, նոր բան ես լսել
արդյոք:

ԼԻԶԱ. — Այն, ընկերները հաղորդեցին, ամեն ինչ վեր-
ջացած ե, ապացուցված:

ՇՈՒՐԱ. — Ի՞նչպես:

ԼԻԶԱ. — Հաղորդեցին կազմակերպության քննության
հետեանքն այդ մասին:

ՇՈՒՐԱ. — (Վշտացած): Ո՞, հրեշտային լուր, Մաքսիմը
լրտես, ագենտ-պրովոկատոր... ով կարող եր սպասել
նրանից այդ:

ԼԻԶԱ. — (Հուսահատագար): Այն, ընկերները պաշ-
տում եյին նրան նրա յեռանդի, անձնվիրության և դա-
դափարականության համար: Յես պաշտեցի նրան, հափրշ-
տակվեցի նրանով, կապվեցի նրա հետ ամուսնական-
ընկերական սիրով կատարելապես վստահ նրա անկեղծու-
թյան, նրա հեղափոխական մտքի անաղարտության վրա...
Իսկ այժմ...

ՇՈՒՐԱ. — Իսկ այժմ ի՞նչ...

ԼԻԶԱ. — Այժմ այն, վոր յես չեմ կարող դիմանալ այդ
ճակատագրական հարվածին:

ՇՈՒԻՐԱ. — Լիդա ջան, յես կը խնդրեյի քեզնից ավելի տոկունություն և համբերատարություն:

ԼԻԶԱ. — Հարվածը ավելի անտանելի յե դառնում և վիշտս ավելի ես խորանում նրանով, վոր ահա յերկրորդ ամիսն եւ արդեն մայր եմ յես նրանից, մի բան, վոր քեզ, Շուրա, մինչև այժմ չեմ հայտնել:

ՇՈՒԻՐԱ. — Մայր, յերեխա...

ԼԻԶԱ. — Այո, մի հուսահատական դրություն, վորի մեջ հեղափոխական գործը տեսնում ես չափազանց տուժած, գգում ես քեզ խարված քո պաշտած հեղափոխականից, հույսերդ բեկված. պատկերացնում ես քեզ մի ըռալեայն ահռելի գիտակցությունը, վոր պաշտելիդ, սիրելիդ ստորաքարշի մեկն և յեղել, մի հրեշ, մի լրտես (վերջին խոսքը արտասանելիս ցնցվում ե) և նրանից վերջապես մի ժառանգ... Ո՞, այդ աղետը տանել իմ ուժից վեր ե...

ՇՈՒԻՐԱ. — (Լիզայի թեվից ըռնում ե յիշ կարեկցարար հանգստացնում): Սիրելի Լիդա, սիրելի Լիդա, վորքան ել դժբախտությունը մեծ լինի, պետք եւ տանել հանուն մարդկային այն բարձր իդեալների, վորոնց դու և մենք ամենքս յերդվել ենք ծառայելու:

ԼԻԶԱ. — Լավ ես ասում, Շուրա ջան, բայց իմ եյությունը տանել չե կարող կատարվածը. յես չարաչար խարվեցի և խարվեցի ումից—մի լրտեսից. Նրա դարշաբթունքները պղծեցին ինձ, նրանից ել յերեխա... ո, ամոթ, անարդանք:

ՇՈՒԻՐԱ. — Կյանքի մեջ, սիրելի Լիդա, շատ ավելի ահռելի դեպքեր են պատահում, վոր հեղափոխականը կոչված եւ հերոսարար տանելու:

ԼԻԶԱ. — Ինձ համար սա յեղակի դեսք ե, մի մահաբեր հարված:

ՇՈՒԻՐԱ. — Ի՞նչ կը լիներ մեր տմենիս նվիրական դործի հետ, յեթե ամենքը քեզ պես մտածեյին և հուսահատվեյին:

ԼԻԶԱ. — Զգիտեմ, զուցե և վատ. ամեն ինչ հանդավ, բարոյական վոշինչ չմնաց իմ մեջ. միթե կարող ե այսուհետեւ խոսք լինել կյանքի արժեքի մասին ինձ համար: Թող ասլրեն նրանք, վորոնք մեծ մարդիկ են, անընկանի բարոյական ույժ ունեն, իսկ ինձ խեղճիս, տկարիս, ֆիզիքապես և բարոյապես բոլորովին ջարդվածիս ի՞նչ կարելի յե անել և ում ե հարկավոր իմ կյանքը: Վոչ, սիրելի Շուրա, զրությունս այնպես չե, ինչպես դու կարող եյիր քեզ ներկայացնել:

ՇՈՒՐԱ. — (Հեղափոխական շեշտով): Սիրելի Լիզա, յերկար տարիներ մենք ընկերներ ենք յեղել. հեղափոխականի տոկունությամբ պայքարել ենք կյանքի ամեն տեսակ չարիքների դեմ, ասլրել ենք ու տեսել դաժան որեր: Յես հետեւ եմ միշտ քեզ, քո աշակերտն եմ յեղել, հափրատակվել եմ քեզնով: Իսկ այժմ. թուլություն, վհատություն, նահանջ. վոչ, այդ չի կարող լինել, չպետք ե լինի հեղափոխականի համար:

ԼԻԶԱ. — Ա՛խ, դուք ինձնից սլահանջում եք դերբնական ույժ. ուր ե նա, կա արդյոք նա. ամեն ինչ մարեց, չկա այլես կյանք ինձ համար: Ո՛, մարդ գաղաններ...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Բ

ԳՈՐԾԱՂԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

Պ Ը Տ Կ Ե Բ Ի

Բանտի բարձր շենքը վանդակապատ նեղլիկ լուսամուտներով աչքի յե ընկնում բեմի խորքում։ Բերդի առաջ ձգվում է մի պարիսպ։ պարսպի և բերդի արանքում յետ ու առաջ են քայլում բանտի հսկող յերկու պահակներ հրացաններն ուսին, վորոնց միայն սվիններն են յերեւում։ Պարսպի ձախ անկյունում կա մեծ դուռը. պարսպի առաջ մի քավական ընդարձակ բակ է, ուր բանտային վարչությունը թույլ ե տալիս որվա մեջ կարճ ժամակակով զրոսանքի դուրս գալու քաղաքական կալանավորներին առանձին-առանձին, յերեմն փոքրիկ խմբակներով։ Բակի ձախ պարիսպը ունի մի փոկրիկ դուռը, իսկ աջ պարիսպը մի մեծ դուռը (ամուր դարպաս), վորը փակված ե և հաղորդակցություն ունի դրսի աշխարհի հետ։

Վանյա, Պավլուլա, Ժակ Մակլին զրոսանքի յեն դուրս յեկել իրենց կամերաններից. յերգում են բարձրաձայն հեղափոխական յերգեր։

Հրաժարվենք, ընկերներ հին որենքներից
Նրանց փոշին թափ տանք մեր վոտքերից
Մենք պաշտել չենք կարող վոսկե կուռքերին,
Գարշում ենք բռնակալ ցարերից։
Մենք կերթանք հալածված ընկերների հետ,
Մենք կերթանք մերկ, սոված բանվորների հետ
Դավադիր թշնամուն մենք միշտ կանարգենք,
Ու նրան կովի դուրս կը կանչենք։

ԴԵ յելի՛ր, բողոքի՛ր, այ բանվոր դասակարդ
ԴԵ յելի՛ր թշնամուն ջարդելու ջան յեղբայր,
Թող գրոհ տա բանվորը անվախ քաջ.
Հառաջ, հառաջ, հառաջ, հառաջ:

Յերդում են դարձյալ վոգենորված «Շաշում են» („Վարշավյանկա“)

Շաշում են վոխերիմ հողմերն անընդհատ,
Աև մութ ուժերը կատաղի շնչում,
Նրանց դեմ վարում ենք որհասական մարտ,
Անհայտ մի վիճակ ե մեզ դեռ սպասում.
Բայց մենք կը պարզենք անվախ ու հպարտ
Ռազմի դրոշակը բանվորի ազատ
Դրոշակը մեծ գործի ժողովրդական.
Հանուն նոր կյանքի սուրբ ազատության.

Դեպի մարտ արյան Արդար սրբազան Քայլեցեք առաջ Բանվորներ քաջ	2	անգամ
--	---	-------

Հայտնվում են բանտային տեսուչը իր սվիտայով—իր ոգնականի
և յերկու վերակացուների հետ:

ԲԱՆՏ. **ՏԵՍՈՒԻՉ**—(Դիմելով կոպտաքար դեպի քաղաքականները). Դուք ձեզ շատ վատ եք պահում, դուք
մոռանում եք, վոր հանցավորներ եք, բանտումն եք և վոչ
դուրսը: Զգնւյշ յեղեք, զսպված պահեք ձեզ, հակառակ
դեպում յես ստիսլված կը լինեմ ամենախիստ միջոցների
դիմել:

ՎԱՆՅԱ.—Մենք իսկի վոչ մի բանում հանցավոր չենք.
Մենք մեզ բոլորովին ազատ ենք զդում այստեղ բանտում,
ինչպես և դուրսը կյանքի սեջ:

ՊԱՎԼՈՒԻՇԱ.—Ամենաղժոխալին միջոցներն անգամ
չեն կարող մեզ լոեցնել ու ընկճել:

ԺԱԿ ՄԱԿԼԻՆ. — Մանավանդ բանվորներին, վորոնք
անհաղթելի յեն:

ԲԱՆՏ. ՏԵՍՈՒՀՉ. — (Զայրացած). Գիտեմ, վոր դուք
վոչ որենք, վոչ կարգ եք ճանաչում. հասարակության
ամենավատ վիժվածն եք դուք:

ՎԱՆՅԱ. — Մեր և մեր գործի ատեսացիան ձեր ըմ-
բռնումից դուրս եւ:

ԲԱՆՏ. ՏԵՍՈՒՀՉ. — (Հրամայաբառ). Լուցեք և յեն-
թարկվեցեք իշխանության:

ՊԱՎԼՈՒՇԱ. — (Ժաղըական յեղանակով). Հա, հա, հա,
յենթարկվել բանտային իշխանության!..

ԺԱԿ ՄԱԿԼԻՆ. — (Հեղնորեն). Հնազանդվել բանտային
իշխանության!..

ԲԱՆՏ. ՏԵՍՈՒՀՉ. — (Սպառնական ծայնով). Շատ գե-
ղեցիկ. կը տեսնեք, թե ինչ կանենք ձեզ հետ, ինչպիսի
ոեժիմ կը ստեղծենք ձեզ համար. ձեր բոլոր արարքների
մասին կը հաղորդեմ ժանդարմապետին, պրոկուրորին,
նահանգապետին և հետո կը տեսնեք:

ՎԱՆՅԱ. — Արեք, ինչ վո՞ կամենաք:

ՊԱՎԼՈՒՇԱ. — Զեզնից ուրիշ բան կարելի չե սպասել:

ԲԱՆՏ. ՏԵՍՈՒՀՉ. — (Հեռանոլով իր սվիտայով, աշքերը
շուլով յեվ ցուցաւատը բարձրացնելով). Յես ձեզ ցույց
կը տամ...:

ՎԱՆՅԱ. — Յուց տվեք. (Բանտային իշխանությունը
դուրս ե գնում):

ՊԱՎԼՈՒՇԱ. — (Ժակ Մակլինին). Հը, ընկեր. Ժակ
Մակլին, վոտներդ դողացին:

ԺԱԿ ՄԱԿԼԻՆ. — Ինչից յերեաց:

ՊԱՎԼՈՒՇԱ. — Հայանի յե ամենքին, վոր հրեաներդ
սաստիկ վախլուկ եք:

ԺԱԿ ՄԱԿԼԻՆ. — Խելքիդ զոռ ես տալիս:

ՊԱՎԼՈՒՇԱ. — Այնքան գանակոծել են ձեզ, վոր վտան-
չի ժամանակ մկան ծակը հազար թումանով եք վորոնում,

ԺԱԿ ՄԱԿԼԻՆ. — Մենք բունդիստներու ապացուցել ենք մեր հեղափոխական լինելը:

ՊԱՎԼՈՒԻՇԱ. — (Կուշտ ծիծաղելով). Տո, դուք ի՞նչ հեղափոխականներ եք. բունդիստները և սոցիալ-դեմոկրատները մի սանդրի կտավ են. սոցիալ-դեմոկրատներն ի՞նչ են, վոր բունդիստները ի՞նչ լինեն:

ՎԱՆՅԱ. — (Ժակտալով). Գիտեմ, վոր եսերներդ թունդ տերը որիստներ եք:

ՊԱՎԼՈՒԻՇԱ. — Այո, տերը որ և տերը որ. Մաքսիմների պես շներին պետք է մի հարգածով սատկացնել:

ՎԱՆՅԱ. — Այո, կատակը մի կողմը լինի. Մաքսիմը սաստիկ վնասեց գործին. մի այդպիսի պրովոկացիա, մատնություն առաջին անգամն ե տեղի ունենում մեր այստեղի կազմակերպության մեջ, են ել մի մարդու կողմից, վորի հմայքը շատ մեծ եր մեր շրջաններում:

ՊԱՎԼՈՒԻՇԱ. — Հենց դրա համար ել բոլորովին տեղին ե այդ շանը սատկացնել. տերը որը հեղափոխական գերագույն միջոցն եւ:

ՎԱՆՅԱ. — Սխալ ե կարծել, թե տերը որը չարիքին վերջ ե տալիս:

ԺԱԿ ՄԱԿԼԻՆ. — Մանավանդ անտեղի և անժամանակ տերը որը:

ՊԱՎԼՈՒԻՇԱ. — Այ, թե հեղափոխականներ եք, հա. խփիր, կտրիր շարունակ աջ ու ձախ, պոռա անդադար «ДОЛОЙ самодержавие!», առաջ անցիր, հարթիր ճանապարհով սրով, ոռւմբերով դեպի հեղափոխությունը, ահա լավագույն հեղափոխական լինելու հատկանիշը:

ՎԱՆՅԱ. — (Հեղնորեն ժպտալով). Յեթե այդպես հեշտ լիներ հեղափոխությունը, մի յերկու տարվա մեջ ամբողջ աշխարհը կը կարմրեր:

ՊԱՎԼՈՒԻՇԱ. — Դուք ավելի շուտ փիլիսոփաներ եք, քան դործի մարդիկ. «գործով պրոպագանդ», «գործով որինակ», ահա հեղափոխությունը:

ՎԱՆՅԱՆ.—Դա բլանկիստական, ավելի շուտ անարդիստական մի խոսք եւ ևուրիշ վոչինչ:

ԺԱԿ ՄՈՒԿԻԼԻՆ.—(Ժաղըելով). Դու, Պավլուշա, մոռացար միայն սիրելի խոսքդ՝ «доловъ самодержавие!»: Այդ կախարդական խոսքով դու կարծում ես ամբողջ աշխարհին տիրել:

ՊԱՎԼՈՒՇԱ.—(Ղծու յեվ խիստ տոնով) Դու բունդիստ, ավելի լավ ե, ձենդ կտրես. բունդիստներդ գողում եք նույնիսկ այդ խոսքն արտասանելիս. վոչ հեղափոխություն, վոչ ել սոցիալիզմ. Պաղեստին, Սիոն, Յերուսաղեմ—ահա ձեր իդյալը:

ՎԱՆՅԱՆ.—Թողեք այդ կատակները. խոսենք ավելի լուրջ հարցերի մասին: (Մտնում են Գրիգորին յեվ Սարտոն):

ԳՐԻԳՈՐԻ.—Ընկերներ, մի նորություն. գեներալգուբերնատորի կարգադրությամբ վճռված ե Լիզային և Շուրային աքսորել կրասնոյարսկից վոչ հեռու կազաչինսկ անունով զյուղը:

ՄԱՐՏՈՆ.—Դա շատ լավ ե: Այդ տեղափոխությունը թերեւ կարող ե նրա ծայրահեղ հուսահատ, հիվանդ տրամադրության վրա բարերար ազդեցություն գործել:

ՎԱՆՅԱՆ.—Շուրան կը լինի նրա ամենալավ խնամողը:

ՄԱՐՏՈՆ.—Շատ հավանական ե ինձ ուղարկեն ապրելու բժշկական մի պունկտում, վոչ շատ հեռու Լիզայի պյուղից. այդ դեպքում հնարավոր կը լինի իմ աքսորավայրից այցելություններ անել Լիզային:

ՊԱՎԼՈՒՇԱ.—Իսկ յես կուղեյի ապրել Լիզայի պյուղում - կազաչինսկում:

ԳՐԻԳՈՐԻ.—Ավելի լավ ե դու հեռու լինես Լիզայից. քո անզգույշ լեզուն ավելի կը վնասի, քան ոգուտ կը տա նրան:

ՊԱՎԼՈՒՇԱ.—Դուք ինձ սովորաբար վանում եք հե-

դափոխությունից. մվ ե հեղափոխություն կատարում, դժւք, թե ինձպեսները (ընդհանուր ծիծաղ):

(Գրիգորին, Վանյան, Պավլուշան յեւ Ժակ-Մակլինը զնում են. մնում ե միայն Մարտոն):

ՄԱՐՏՈՆ.—(Մտահոգ): Լիզան ինձ գրավեց. իմ ասենասիրելի ընկերը դարձավ: Նրա դրությունը որեցոր վատթարանում ե. դա սաստիկ անհանդստացնում ե ինձ: Նա չե կարողանում հաղթահարել իր դժբախտությունը: Մի հիանալի, անփոխարինելի ընկեր, վորը դեռ պատահեկան հաստելից նվիրել ե իրեն հեղափոխական գործին, մի պաշտելի եակ, վորը իր ամուսին-ընկեր հրեշ Մաքսիմի մասնության պատճառով սաստիկ տուժում ե. տուժում ե նրա հետ և կուսակցական-քաղաքական գործը:

(Հայտնվում ե Լիզան ըավականին անփոյթ, զըեթե շանրած մազերով, վոր կարծես ավելի հմայք ենի զեղեցկություն ե տալիս նրա հոյակապ կազմվածքին յեւ սիրուն դնմքին):

ՄԱՐՏՈՆ.—(Դիմավորելով նրան): Ահա և դու այստեղ, սիրելի Լիզա. սաստիկ ուզում եյի քեզ այսոր տեսնել, լավ ե, վոր պատահեցինք: Հայտնեցին արդյոք քեզ և Շուշային բանախց արձակելու մասին:

ԼԻԶԱ.—Հայտնեցին, վոր այս յերկու որս կուղարկեն մեզ կազաչինոկ ապրելու:

ՄԱՐՏՈՆ.—Կարելի յէ ուրեմն շնորհավորել. յես շատ ուրախ եմ այդ բանի համար:

ԼԻԶԱ.—Ի՞նչ ոգուտ. կարմզ ե արդյոք դա մազաշափ փոփոխություն առաջ բերել իմ հօգեկան դրության մեջ:

ՄԱՐՏՈՆ.—Ասել այդ՝ վճռականապես կարելի չե. բանտից դուրս՝ ավելի ազատ կյանքը, նոր միջավայրը և այլն բարերար աղղեցություն կարող են գործել:

ԼԻԶԱ.—Այդ այդպես ե ընդհանրապես. բայց լինում են մոմենտներ, յերբ մարդուս աչքին այլիս վոչ մի զրա-

վիչ բան չի յերեռում. նման մի մոմենտ ապրում եմ և յես
ներկայումս:

ՄԱՐՏՈ. - (Նկատելի հուզմունքով): Սիրելի ընկեր
լեղա, նոր չե, վոր ծանոթանում ենք միմյանց հետ: Յես
քեզ ճանաչեցի վորպես լավագույն ընկեր: Յես ուզում
եմ բոլորովին ազատ և անկեղծ խոսել քեզ հետ, մատնա-
նշել մի քանի դառը ճշմարտություններ:

ԻԻԶԱ. Խոսիր ազատ. քեզնից միայն կարող եմ լսել
անկեղծ խոսք:

ՄԱՐՏՈ. - Միայն այն պայմանով, վոր դու այդ վըշ-
տահար դրությանդ մեջ, իմ խոսքը չընդունես վորպես
վիրավորանք, վորքան ել նա դառը լինի:

ԻԻԶԱ. - Յես պատրաստ եմ լսել անկեղծ խոսք քեզ-
նից, վորպես մոտ ընկերից:

ՄԱՐՏՈ. - Լսիր, ուրեմն, ընկեր: Այն որից, յերբ քեզ
հայտնի յեղավ Մաքսիմի լրտես լինելը, հեղաշրջումն առաջ
յեկավ քո մեջ. դու բոլորովին փոխվեցիր:

ԻԻԶԱ. - Շատ ձիշտ եւ:

ՄԱՐՏՈ. - Այն մոմենտից ել դու դադարեցիր հեղա-
փոխական լինելուց:

ԻԻԶԱ. - Ի՞նչպես. իմ հասկացողությամբ, ընդհակա-
ռակը, յես մնում եմ հեղափոխական՝ չհաշտվելով այն
անտանելի անարդանքի և ծանր հարվածների հետ, վոր
կրեց և կրում ե իմ սիրած հեղափոխական դործը և թե
յես, վորպես հեղափոխական:

ՄԱՐՏՈ. - Դա անհատի սուբիեկտիվ բարոյական տրա-
մադրությունն ե դեպի գործը, մինչդեռ բարոյական և
քաղաքական մեծ խնդիրներին պետք ե մոտենալ վոչ
սուբիեկտիվ, այլ ոբիեկտիվ մեթոդներով: Այն մոմենտից,
յերբ դու սուբիեկտիվ, անհատական դգացմունքներով
տարվելով, կորցրիր հավասարակշռությունդ, սլայքարելու
ընդունակությունն ու հեղափոխականի կամքն ու կորովը—
դու դադարեցիր հեղափոխական լինելուց:

ԱԻՉԱ. — Միթե կարելի յէ անտես անել, վոչինչ համարել այն անարդանքը, վոր հասցըել ե լրտեսը «հեղափոխականի» անվան տակ ընդհանուր գործին և անհատապես ինձ՝ պարգևատրելով նույնիոկ մի ժառանգ։

ՄԱՐՏՈ. — Միթե, սիրելի Լիզա, նորություն կարող ե լինել հեղափոխականի համար այն, վոր պայքարը թշնամի բանակների մեջ անողոք ե լինում և միջոցների խորություն այդ պարագայում ինկատի չե առնվում. դա շատ շավալի յե, բայց այդպես ե։

ԱԻՉԱ. — Ինձ թվում ե, թե հեղափոխականը միջոցների խորություն միշտ ի նկատի պետք ե առնե։

ՄԱՐՏՈ. — Այդպես ե. ընդհանրապես դա կանոն պետք ե համարել հեղափոխականի համար. սակայն կյանքի արտակարգ, բացառիկ մոմենտներին անխուսավելի յե դառնում բացառիկ միջոցների կիրառումը։

ԱԻՉԱ. — Իսկ քո կարծիքով, ընկեր Մարտո, կարելի՞ յե տանել այն ամոթը և անարգանքը, վոր մի լրտեսից կարելի յե յերեխա ունենալ, պահել ու մեծացնել։

ՄԱՐՏՈ. — Զգիտեմ՝ կարելի՞ յե արդյոք հեղափոխականից լսել մի այդպիսի անհեթեթ հարց. արդարե չափաղանց ծանր ե այդ կացությունը, բայց վոչ անտանելի։ Պետք ե տանել ամեն տեսակ գրություն հասարակական-հեղափոխական գործի համար։

ԱԻՉԱ. — Այն, յեթե միայն չե մարել քո մեջ կյանքիդ վերջին նշույլը. լրտեսի յերեխայի ծննդյան առաջին որից իմ կյանքն արդեն բոլորովին մարած պետք ե համարել։

ՄԱՐՏՈ. — (Տաքանայով): Ինձ մնում ե միայն դարմանալ, ընկեր Լիզա։ Միթե կյանքի մեջ քիչ են պատահում ավելի ահռելի այլանդակություններ, քան լրտեսից յերեխա ունենալը։ Առա ի՞նչ ե մեր պայքարի իմաստը, յեթե վոչ պայքար հենց այդ այլանդակությունների դեմ։ Սառւմ ես, վոր յերեխան լրտեսիցն ե դա մեծ անարգանք ե։ Ըսդունում եմ, վոր անհատապես քեզ համար դա չափա-

զանց անախորժ եւ և նախապաշարված հասարակությունը լավ աչքով չի նայելու այդ ծնունդի վրա։ Բայց միթե կարծում ես, վոր այդ պատճառով դու դադարում ես հեղափոխական լինելուց։ միթե կարծում ես՝ ընկերներդ նույն վերաբերմունքը կունենան դեպի քեզ, ինչ վոր մեշանական հասարակությունը։

ԼիջԱ.—Չար և անողոք ճակատադրով լրտեսի ամուսին յեղած՝ նրանից յերեխա վաստակելը բարոյական անտանելի մի աղետ ե, վորի պատճառով մահը ինձ և յերեխայի համար մեծ բարիք միայն պետք ե համարել։ Անձնասպանությունը միակ յելքն ե այդ դրությունից։

ՄԱՐՏՈ.—Դա արդեն, լիզա, չափազանցություն ե։ Վոր բարոյական իրավունքով կարելի յե յերեխային կյանքից զրկել։ մտածելն անդամ այդ մասին բարոյապես անթույլատրելի յե։ Ինչով ես մեղավոր դու, վոր կույր ճակատագիրը կամեցել ե քեզ պատժել կամ ինչով ե մեղավոր յերեխան, վոր ծնվում ե լրտեսից։ Զավակները պատասխանատու չեն կարող լինել իրենց ծնողների հանցանքների համար։

ԼիջԱ.—Լրտեսի դավակը բացի ամոթանք լինելուց՝ կարող ե և լրտես լինել ապագայում։

ՄԱՐՏՈ.—Շատ սխալ և տարորինակ կարծիք։ կարող ե լինել ընդհակառակը։ Լրտեսի, դահճի կամ ավագակի զավակը անսպատճառ լրտես, դահճ, ավագակ չի դառնում։ մարդո չի ծնվում լրտես, դահճ, ավագակ։ Պատահել ե, վոր վոճրագործի զավակը առաքինի, մեծ և հանճարեղ մարդ ե դարձել, իսկ առաքինի կամ հանճարեղ մարդու դավակը—ապուշ կամ վոճրագործ։

ԼիջԱ.—Վորքան ել ուղիղ լինեն քո տսածները, բայց և այնպես նրանց ըմբռնումը հնարավորություն չի տալիս անհատապես ինձ աղատվելու իմ ներկա դրությունից։ (Դալիս և Շուրան)։

ՄԱՐՏՈ.—Ահա և Շուրան (ոիմելով նրան)։ Մեր Լի-

զան, ընկեր Շուրա, վոչ մի կերպ յելք չի դանում դուրս դալու իր ներկա դրությունից:

ՇՈՒՐԱ. — ՄԵԿ միասին աքսորում են. անձնապես վոչինչ չեմ խնայելու իմ սիրելի Լիզայիս ծառայելու: (Մոտենալով քնքշաթար գրկում եւ յեվ համբուրում):

ՄԱՐՏՈ. — ՍԻՐԵԼԻ Լիզա, վերջին անգամ իմ ընկերական խոսքն եմ լսելի դարձնում քեզ Շուրայի ներկայությամբ. վաղը կամ մյուս որը քեզ և Շուրային կուղարկեն աքսոր. դու գիտես բանտային կարդերը. ինձ և մյուս ընկերներին անհնարին ե ձեզ հետ վերջին ըոսկեյին տեսմնվել և ընկերական հրաժեշտ տալ. հավանորեն սա մեր վերջին աեսակցությունը լինի և վերջին խոսքն այստեղ բանտում: Խնդրում եմ, հանուն մեր գործի և ընկերության՝ ույժ հավաքել, մաքառել ու մտքերի և այլ հոգեկան ծանր պայմանների դեմ, վորոնք քեզ սաստիկ ընկճել են վերջերս: Թերեւ մենք դարձյալ տեսմնվենք. հաճախ կը դրեմ քեզ: Շուրան քեզ մոտ կը լինի, կոգնի քեզ ամեն բանում: (Մոտենալով Լիզային՝ հուզված ձեռք և մնինում): Մնաս բարով, սիրելի ընկեր, հիշեր միշտ մեր ընկերությունը, մի մոռանա իմ խոսքը, ինչպես և յես չեմ մոռանա ձեզ յերբեք. մնաս բարով: (Դրվագում յեվ համբուրվում են. Լիզան հեծկլում է. Շուրան հուզմունքից արտասվում է. Մարտոն Շուրայի հետ յեվս համբուրվելուց հետո վերջին անգամ հայացք և զցում ընկեսների վրա յեվ անհետանում):

ԼԻԶԱ. — ԱՇԽ, գնաց, սրտակից ազնիվ ընկերը դնաց: Ծերբեիցե դարձյալ կը տեսմնեմ արդյոք նրան:

ՇՈՒՐԱ. — Կը պատահեք, յես հավատացած եմ այդ բանում: Վորքան ցանկալի յեր, վոր Մարտոն մեր զյուղում ընակվեր:

ԼԻԶԱ. Շատ լավ կը լիներ. բայց նրան թույլ չեյին տա կազաչինսկում ասլրելու:

ՇՈՒՐԱ. — Ուղիղ ե, կազաչինսկը կենարոնական վայր եւ:

ԼԻԶԱ. — Զգիտեմ, մոտ ապագյում ինչ կարող ե պա-

տահել ինձ հետ, բայց յես սաստիկ կուղենսցի դարձյալ
տեսնվել նրա հետ:

ՇՈՒԻՐԱ. — Մարտոն արդեն դիմել ե ուր հարկն ե,
աշխատում ե ընակություն գանձել Յենիսեյսկ քաղաքից
վոչ հեռու բժշկութան մի ոլունկում. այդ դեսլքում նա
կարող ե մեզ հաճախ այցելել: Լիզա ջան, այսոր կանվոյի
դալուն են սպասում. վաղը կարող են մեզ ուղարկել.
այդպես ել հայսնեց ինձ բանտային տեսուչը:

ԼԻԶԱ. — Ցեթե այդպես ե, պետք ե դնար, հավոքվել,
պատրաստվել:

ՇՈՒԻՐԱ. — Այս, հարկովոր ե դնար (Ցեղուսով թեվ
թեվի քննած դուքս են զնում: Մտնում են Գրիգորին,
Վանյան յեզ Պալլոց ն):

ԳՐԻԳՈՐԻ. — Վաղն անպատճառ ուղարկում են Լի-
զային և Շուրային. քիչ առաջ հաղորդեց ինձ այդ մասին
բանտի կանցելյարիայի ծառայողը, մեր գաղտնի աղենտ
աշխատակիցը: Բանտի բոլոր ընկերներին կազմադրվում ե
այսոր պատրաստվել և միաժամանակ ընդհանուր սիգ-
նալով ցույց անել մնանից բաժանվող ընկերների պատ-
վին: Այդ լուրը անմիջապես հաղորդեցի դուրսը կազմա-
կերպության, առաջարկելով ընկերներին քաղաքումն ել
կաղմակերպել քաղաքական ցույց մեր ընկերների աքսորի
առիթով:

ՊԱՎԼՈՒԻՇԱ. — Այ, լավ բան, հենց իմ որտից ես
խոսում, ընկեր Գրիգորի. այնքան և այսողես ոլիուի դո-
ւամ «Долой самодержавие» իմ կամերայի նեղլիկ պա-
տուհանից, վոր բանտի պարխապները ճեղքվեն: Ցեթե
քաղաքում ցույց տեղի ունենաւ և միևնույն ժամանակ
շան պես սառկացնեն մեր դահիճներին, ժանդարմներին և
լրաես-պրովոկատորներին, վորոնք այժմս ազատ զրունում
են քաղաքի փողոցներում, դա կը լիներ հեղափախության
մի փառավոր սիգնալ. ո, այն ժամանակ յես ինձ լը զգայի
իմ ուրախության զաղաթնակետին:

ՎԱՆՅԱ. — Ընկեր Գրիգորի, հենց այս ըռպեյխս պետք է ղնալ տեխնիքական պատրաստություններ տեսնելու վաղվան ցույցի համար, հաղորդել ընկերներին ցույցի մանրամասնությունները, կարմիր թաշկինակներ հասցնել նըրանց և այլն:

ԴՐԻԳՈՒԹԻ. — Տեխնիքական գործը քեզ ե հանձնված, ընկեր Վանյա: Գնանք, ուրեմն ժամ առաջ պատրաստություններ տեսնելու: (Ամենքը լուրս են զնում):

ՄԱՔՍԻՄ. — (Ժանրաբայլ առաջ ե զալիս): Յերեխանէր, ապուշներ, պետության հիմքերը քանդելու յերեակայությամբ հափշտակվածներ, վոչնչությունը կորիվ ե մղում ահոելի ուժի — պետության դեմ. քոթոթի կորիվ փղի դեմ: Պետք ե տսել, վոր դերս լավ կատարեցի: Արածներիս մեջ միայն մի բանն ե ինձ մտածել տալիս — յերեխաս, վոր պիտի ծնվի Լիզայից: Լիզան կին ե, ինչպես և ամեն կին. Լիզան վորպես արտադրության մի դեղեցիկ գործիք՝ յես չեյի կարող չողովել նրանից և ոգովեցի. այդ բանում վոչ մի հանցանք չեմ տեսնում: Միայն յերեխաս... Ի՞նչ ե լինելու նրա վիճակը. ահա մի հարց, վորի վերաբերմամբ յես ինձ հաշիվ չեմ տվել իր ժամանակին: Լիզան հիմար կին ե, ինչպես բոլոր կանայք. դյուրահավատ, հափշտակվող, թեթևսովիկ. նա հափշտակվեց ինձանով, վորպես նշանավոր հեղափոխականով, հա, հա, հա... Գործի քննությունն արդեն վերջացած ե. շատերի վերաբերմամբ դատավճիռ ե կայացել: Լիզային և Շուրային վճռել են հինգ տարով աքսոր: Յես ամենայն հավատարմությամբ կատարեցի իմ պարտքը: Յեթե սխալմունքներյեղելնեն, և շերտ, մեծ հանցանք չե. սխալմունքը միշտ կարող ե պատահել: Գլխավորն այն ե, վոր միասիւտության մասսակար տարրերն անխնա վոչնչացման յենթարկվեն: Այդ գաղափարին եմ ծառայել և կը ծառայեմ մինչև վերջը:

Բոպե առ ըոպե սպասում եմ բանտից արձակման
հրամանին (լովում ե ծաշի սիզնալը). ճաշի ժամանակ ե,
պետք ե գնալ կամերա:

Ո՞, ազատություն, ի՞նչ լով բան ես, բայց վոչ չա-
րադրծների, հայրենիքի և գահի դավաճանների համար
(դուրս ե զնում):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ռ

ՊԵՏԿԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ

Նույն բերդի շենքն ու բակը, ինչ վոր յերբորդ գործողության տուաջին մասում:

Քաղաքական ցույց: Լիզային և Շուրային աքսորում են. կոնվոյի զինվորներով շրջապատած՝ նրանց դուրս են բերում բանտից բակը. կոնվոյի հետ գնում ե սուրը մերկացրած՝ կոնվոյի առաջնորդ սպան. կոնվոյի յետևից գնում են քաղաքապետը, բանտապետը, ժանդարմերիայի շեֆը, բանտի զինվոր-պահակների, վերակացուների մի ամբողջ վոհմակ: Այն բոպեյին, յերբ նրանք անցնում են բակով փողոց դուրս գալու, հանկարծ լսվում է բանտի շենքից մեծ աղմուկ. կոնվոյն անզգայաբար կանգ է առնում. բերդի մի քանի նեղլիկ պատուհաններից անկվում են կարմիր դրոշակներ (փայտիկների վրա կարմիր թաշկինակներ): Ողը թնդում է կեցցեներով և կորչիներով. «Կեցցե մեր աքսորական հեղափոխական ընկերները, կեցցե աղատությունը, կեցցե սոցիալիզմը, կորչի բանությունը, կորչի ինքնակալությունը» և այլն:

Այդ աղմկալից ցույցի ժամանակ՝ քաղաքից շտամպ գալիս են մի վոստիկան և մի ժանդարմ:

ՎՈՍՏԻԿԱՆ. — (Քաղաքապետին շնչառապատ): Զերդ բարձրապատվություն, քաղաքում մեծ ցույց և կատարվում, ընդհանուր շփոթ և և արյուն և թափիվում:

ԺԱՆԴԱՐՄ. — (Հուզմունքով ժանդարմերիայի շեֆին): Այն, ձերդ գերտղանցություն, քաղաքում մեծ ցույց և, կատարվում է աներեսակայելի իրարանցում և փողոցային արյունահեղ կոփլսեր:

(Քաղաքապետը յեկ ժանդարմապետգ շփոթված այս ցնցող տեղեկություններից՝ թողնում են բանտը իրանց փաքրաթիվ սկիտայով յեկ շտապում քաղաք:

Յանտի աղմկալից ցոյցը շարունակվում է. ցոյցարար
բանտարկյաներից մեկի դեմքը ճանաշվում է, ուս Պավլո-
շան է, վորը իր կաթորայի նիզիկ լուսամուտից ամքսոց
կրծքով պոռաւ է «Долой самодержавие, долой деспо-
тизм, смерть палачам, смерть Максиму!». Պավլոշայի
պատուհանի ուղղությամբ մի քանի անգամ կրակ է տալիս
պահակը. Հոգմոնք. բողոքի, վատաքանության ձայներ:
Հետո դարձյալ ովացիաներ աքտորվող ընկերներին: Լի-
զան յեվ Շուրան թաշկինակները շարժում են յեվ ողային
համբույրներ են ուղարկում կայսերավոր ընկերներին: Կոն-
վոյի պետը (սպան) միջամտում է յեվ փորձում և թույլ
շտայ Լիզային յեվ Շուրային իրենց զգացմոնքները վորեվն
կերպ արտահայտելու: Լովում են. Տո սвидания, Տո սвидания,
Տո սвидания, Տո սвидания, Տո սвидания, Տո սвидания!

Հեղափոխական յերգերի ձայներ:

Ի Ն Տ Ե Բ Ն Ա Ց Ի Ո Ն Ա Լ

Յելիր, ում կանքը անիծել է,
ով ճորտ է, մերկ է և ստրուկ:
Արդեն վառվում են մեր սրտերը,
արդեն կովի յենք մենք ձգտում:
Այս հին աշխարհը կը փորենք մենք
մինչև հիմքերը—և հետո
մեր նոր աշխարհը կը շինենք մենք,
ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:
Սա յե վերջին կոփվը
և պայքարը մեր մեծ.
Ինտերնացիոնալը
աշխարհը կը փրկե:

Ա. Ռ. Ա. Զ Գ. Ե Ր Վ

(Смело друзья)

Առաջ սողելք մի վհատեք,
 Նետվեք անվախ դեպի կոփիվ.
 Մայր որրանը յեկ ազատենք,
 Փրկենք մեր կյանքն ու պատիվ: } 2 անգամ

(Ղարազույրն իշնելոց հետո հեղափոխական յերգը
 լսվում է դարձյալ մի քանի վայրելյան):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Բ



ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀՈՐՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

Արտօրավայրում։ Լիդայի և Շուրայի բնակարանը՝ ոռուսական զյուղի խրճիթ, պարզ, անշուք կահ-կարասիքով՝ սեղան, 3-4 աթոռ, 2 մահճակալ և այլն։ Խրճիթի յերկու պատուհաններից յերևում ե մայրի անտառը, գետը։ Լիդան մենակ ե, նա սաստիկ նիհարած, մաշված տեսք ե կըում։

ԼիջԱ. — Ահա և մենք աքսորավայրում։ (Մոտենում ե պատուհանին յեվ նայում դուքսը)։ Վորքան գեղեցիկ ե բնությունը, մայրի անտառը, գետը։ Իմ ամայացած սրտի վրա կարծես վոչ մի բան չի ազդում այլես։ Ո՛, ճակատագիր, վորքան դու անողոք և անգութ եյիր իմ վերաբերմամբ։ Ի՞նչ բան եյի սոլասում և ինչ տեսաւ ի՞նչ մնաց իմ անցյալից։ զբեթե վոչինչ։ մի թառամած սիրտ, մի կիսամեռ դիակ։ (Նստում ե սեղանի մոտ, զլուխը ձեռքին դնելով մտառանշ մտածմունքների մեջ և ընկղմվում։ կարծես հանկարծ սթափիվելով)։ Առողջությունու որեցոր քայլայվում ե. չեմ կարողանում վոչ մի կերպ հոգեկան հանգիստ դոնել։ Յերեխոն արդեն մի քանի տմասկան ե. մանկաբարձուհի Անաստասիա Պավլովսան քննելսւց հետո խիստ պատվիրեց զգույշ և հանդիստ լինել։ Ի՞նչ արժեք ունեն իմ այս դրության մեջ բժշկի կամ մանկաբարձուհու պատվիրները։ Մարտոյին չեմ կարողանում մոռանալ։ Նրանից ստանում եմ նուժակներ։ Նրանց յես պահում եմ ամենայն սրբությամբ։ Մարտոյին սիրեցի ընկերական

ջերմ սիրով. Նա արժանի յե այդ սիրուն: (Մտնում և Շուրան):

ՇՈՒՐԱ. — (Ուրախությամբ): Լիդա ջան, նամակներ Մարտոյից քեզ և ինձ:

ԼԻԶԱ. — ԱՌԻ, վորպիսի ուրախություն. (Շուրան տալիո և նամակներից մեկը Լիզային, գորը անհամբերությամբ քացում և յեվ կարդում հետաքրքրությամբ մի քանի վայրելյան: Շուրան անում և նույնը),

ՇՈՒՐԱ. — ԻՆՁ շատ հաճելի յե իմանալ, թե ինչ նորություններ ե գրում քեզ Մարտոն:

ԼԻԶԱ. — Ահա լսիր, Շուրա ջան, թե ինչ ե գրում: (Կարդում ե).

ՄԻՐԵԼԻ և անդնահատելի Լիդա.

Հաղար ներողություն, վոր հակառակ իմ կամքի նամակը փոքր ինչ ուշացրի: Այստեղ կան մի քսնի քաղաքական աքսորականներ: Հսկողությունը և հալածանքը քաղաքական աքսորականներին այստեղ և Միրիրի բոլոր գյուղերում աներեակայելի յե: Ամեն տեղից հուղմունքների լուրեր են հասնում: Կամտյականություններին և ճնշումներին չափ ու սահման չկա. այս որերս մեզ բոլորիս խուղարկեցին այստեղ. տարան և միակ սլաշտպանության զենքս — իմ ըեփոլվերը: Մեր հսկիչ լրտես վերակացվին փայտով մի լավ ծեծեցի նամակը գողանալու և այլ գարշելի արարքների համար: (Շուրան ծիծաղում և, Լիզան ժապուս): Գյուղացիների հետ հարաբերություններ ենք ստեղծել, քաղաքական պրոպագանդ ենք մղում: Գյուղից բացակայելու համար սաստիկ պատժի յեն յենթարկում. մի քանի որով կատալաշիա, ծեծ և այն: Ինձ գեռ չեն նստեցրել, բայց կարող են նստեցնել: Մեծ փափառ ունեմ ծլկվելու, սավառնելու դեպի ձեզ, բայց առայժմ չի հաջողվում:

Շուրայի մի գրածից յերեսում ե, վոր առողջությունդ ավելի յե վատթարացել, քան առաջ: Պարզ ե, վոր դու

չես կարողանում քեզ պահել։ Յեթե դու դիտակցեցիր՝ սիրելի Լիզա, թե վորսլիսի մոտահոգություն ե պատճառում ինձ քո հիվանդությունը, թերես դու վորոշ չափով դրապեյիր քեզ, զգուշություն պահպանեյիր։ Յես բոլորովին վստահ եմ քո լրջմտության վրա։

Գրիր ինձ ուրախ լուրեր. անհամբեր սպասում եմ, թանգագին Լիզա, քո սիրալիր նամակին։

Ընկերական ջերմ բարեներով և համբույրներով՝

Մարտ

25 ապրիլի, 1904 թ.

Կամենսկոյե գյուղ

Ահա բոլորը. քեզ լուս ե դրում, Շնորա։

ՇՈՒՐԱ. — Գրում ե գրեթե միայն քո մասին, առանձնապես հետաքրքրվում ե քո վիճակով։

ԼԻԶԱ. — Մարտոյի նամակներն ինձ սաստիկ ուրախացնում են։ Մարտոն, Շնորա ջան, գրավել ե ինձ վոչ թե միայն վորպես հեղափոխական, այլ և վորպես ազնիվ ընկեր և ընտիր մարդ։ Մարգկայինը, վոր մեր ընկերներից շատերի համար ոտարութի բան ե, նրանում առանձնապես շեշտված ե։

ՇՈՒՐԱ. — Այո, ամենքին ել սիրելի յե նա։

ԼԻԶԱ. — (Մարտոյի նամակը դարձյալ մի անգամ համությամբ աշքի անցկացնելուց հետո): Շնորա, դու դիտես, վոր գիշերս գրեթե չկարողացա քնել։ մտածմունքներս ինձ հանգիստ չովին։ (Սկսում ե հազար)։ Ինձ հարկավոր ե անկողին մտնել, հանգստանալ։

ՇՈՒՐԱ. — Հանգստացիր, Լիզա ջան։

(Լիզան իր վերի հագուստները, կ'աշեները հանում, պառկում ե մահճակալում, թեթեվ վերմակ զցելով իր վրա։ Շուրան ոգնում ե նսան, շտկում ե ըարձև յեվ այլն։ հազը շարանակվում ե մի քանի վայրկյան, վորի ժամանակ Շուրան մահճակալի մոտ աթոռին նստած հակում ե

յեվ զգվում ե Լիզային, վորպես մայրը յերեխային. լոռ-
թյուն. Շուրան շուտ-շուտ նայում է Լիզային):

ՇՈՒՐԱ. — (Յած ճայնով): Արդեն քնեց: (Մտահոգված):
Որեցոր մաշվում ե Լիզան, վոչ մի փոփոխություն դեպի
լուվը, Մարտոն իր նամակներում առանձնապես հանձնա-
բարում ե ինձ լուրջ հոգատարություն և հոկողություն
Լիզայի առողջության վրա: Չեմ ինայում վոչ մի ջանք
և նեղություն, միայն թե նա լավ լինի. սակայն չի լինում.
Նա ավելի շուտ դեպի անկումն ե գնում: Դա սաստիկ
անհանգստություն ե պատճառում ինձ, թեև աշխատում
եմ ցույց տալ ինձ Լիզային բոլորովին հանգիստ: (Մի քանի
վայրկյան լուլմյոն: Շուրան իր զլիսի մազերը, շորերը
շտկում ե, պատրաստվում ե դուրս գնալ. դարձյալ մի
անգամ նայելով յեվ համոզվելով, վոր քնած ե, դուրս և
գնում: դուն թխոցից Լիզան զարթնում ե յեվ հազում:
նայում ե այս յեվ այն կողմը):

ԼԻԶԱ. — Վոչ վոք չկա. Շուրան տանը չե, յերեկի ժո-
ղովի յե գնացել (հազում ե). թոքերս հանգիստ չեն. գը-
լուխս սաստիկ ցավում ե. (հազը սաստիանում ե. մտնում
ե Ավղոտիան, զնակարանի տիրուհին):

ԱՎՂՈՏԻԱ. — Տիկին ջան, կաթը ինքդ կը կամենաս
յեփ տալ, թե յես յեփ տամ: (Լիզայի հազը շարունակվում
ե): Ինչու յես հազում, տիկին ջան, մըսել ես, թե ինչ ե:

ԼԻԶԱ. — Զգիտեմ, Ավղոտիա, հազս ինձ հանկարծ
բռնեց. կաթը ինքդ յեփ տուր փուռի մեջ, բայց այն-
պես արա, վոր չայրիմ:

ԱՎՂՈՏԻԱ. — Շատ բարի, տիկին ջան, կանեմ՝ ինչ-
պես կամենաս, միայն թե դու լավ լինես: (Դուրս ե գնում):

ԼԻԶԱ. — (Մենակ): Շատ բարի կին ե Ավղոտիան.
Նրա, ինչպես և բոլոր սիրելոյացիների վերաբերմունքը
դեպի մեզ — քաղաքական աքսորականներս -- չափազանց
սիրալիր և բարեկամական եւ (Հազը չե դադարում. զալիս
և Շուրան):

ՇՈՒԻՐԱ. — Ա՛խ, դու արդեն զարթնել ես, կիզա ջան, ի՞նչ ե պատահել, դու սկսել ես հազմալ: (Մոտենում ե, ծեռքով շփում գլուխը, ճակատը): Դու կարծես տաքություն ել ունես, տեր-Աստված:

ԼԻԶԱ. — Քնած եյի, վոր հազս սկսեց. զարթնելիս՝ յես ինձ վատ զգացի:

ՇՈՒԻՐԱ. — Պետք ե խոկույն գնալ մեր ընկեր Փելղշերմանկաբարձուհի Ահաստասիա Պավլովնայի մոտ և հրավիրել բժիշկի: Յես չեմ թողնի քեզ անողնական: (Պատրաստվում ե գնալ):

ԼԻԶԱ. — Կաց, Շուլը ջան. այս ըստեյիս Ավղոտիան կաթ կը բերի. դու համարյա թե վոչինչ չես կերել այսոր: **ՇՈՒԻՐԱ.** — Դա այնքան ել կարեոր չե, հարկավոր է շտապել: (Դնում ե արագաքայլ. Ավղոտիոն կաթը ընդում ե):

ԱՎԴՈՏԻԱ. — Տիկին ջան, կաթը քո ուզածին պես յեփ տվեցի:

ԼԻԶԱ. — Շնորհակալ եմ, Ավղոտիա, դու շատ բարի յես:

ԱՎԴՈՏԻԱ. — (Սեղանի վրա դրված բաժակի մեջ կաթ ե լցնում, իսկ կաթով մեծ աւանը մի կողմը դնում): Ահա, խմիր տիկին ջան, քանի տաք ե. լավ ե տաք-տաք խմել:

ԼԻԶԱ. — Թողη մի քիչ պաղի:

ԱՎԴՈՏԻԱ. Ի՞նչպես կամենաս (Լիզան հազում ե). Ելի հազում ես, տիկին ջան. ոհ, աքսորականների համար շատ գժվար ե այստեղ Սիրիում. Նրանց շատ եմ տեսել. Նրանք ամենքն ել բարի յեն. սւսում առած, գիտուն մարդիկ են:

ԼԻԶԱ. — Տեսել ես, վրատեղ. միայն այս գյուղում, թե ելի Սիրիրի ուրիշ տեղերում:

ԱՎԴՈՏԻԱ. — Յեղել եմ շատ տեղերում. Տուրուխանսկ, Իրկուտսկ, Չաբայկալ:

ԼԻԶԱ. — Ճանապարհորդել ես ի՞նչ նորատակով:

ԱՎԴԻՌԻԱ. — Մանկական հասակից վորք եմ մնացել և հայրս, հեռու տեղեր աշխատանքի գնալով ինձ ել իր հետն եր տանում. նա հասարակ գյուղացի բանվոր եր, շատ եր սիրում ուսում առած, զիտուն մարդկանց, մանավանդ ձեզ պես աքսորականներին. մենք նրանց պատահում եյլնք ամեն տեղ. նրանք միշտ զբույց եցին անում հորս հետ լավ-լավ բաների մասին, յես ել լսում եյի:

ԼԻԶԱ. — Հայրդ կենդանի յե այժմ:

ԱՎԴԻՌԻԱ. — Վոչ, շատ վաղուց ե վախճանվել: Նա մեռավ վոսկու հանքերում — յերկարատե ծանը հիվանդությունից հետո: Ահ, վորքան տանջանքներ կրեց նա իր կյանքում:

ԼԻԶԱ. — Իսկ այստեղ կազաէնսկում յեղել են միշտ քաղաքական աքսորականներ:

ԱՎԴԻՌԻԱ. — Ինչպես չե. վերջին ժամանակները շատ ավելի: Միշտ ինձ մոտ ձեզ պես լավերն են յեղել:

ԼԻԶԱ. — Ի՞նչ զիտես, Ավդիտիա, թե մենք լավ ենք:

ԱՎԴԻՌԻԱ. — Ինչի, չեմ տեսնում վոր. (Լիզան փորձում ե կաթը խմել, ըայց դժվարությամբ, հազը թույլ չի տալիս. Ավդոտիան դուրս ն գնում):

ԼԻԶԱ. — (Բաժակը դնում ե սեղանի վրա. փորձում և վեր կենալ յեվ նստել աթոռի վրա. խոսում ե նվազած ծայնով. հազը ընդմիջումներով շարունակվում ե): Լինել կամ չլինել. ահա իմ կյանքիս ներկա զիլեմման: Լավ ե չլինել, քան թե այսպես լինել: Վերակենդանանալ կարելի յեր միայն հրաշքով, դերբնական ուժով. բայց մտածել դրա մասին — ցնորք ե:

Հոռետեսությունը, ասում են, լավ չե. զիտեմ այդ. նա ավերիչ ե, նա ինձ արդեն ամբողջապես պաշարել ե: (Հազը սաստկանում ե): Իմ կյանքի խնդիրն արդեն վճռված ե, իմ գոյության իմաստը չքացած (հուզվելով). ինչ ե մնում ինձ անել, անձնասպանություն, վերջ տալ կյանքին, իմ և թե յերեխայի կյանքին: «Դու բարոյական

վոչ մի իրավունք չունես այդ անելու, — ասաց խրոխտաբար Մարտոն. մանավանդ, ավելացրեց, դա վոճրագործություն կը լիներ յերեխայի վերաբերմամբ»։ Ուրեմն ի՞նչ անել, չդիտեմ. յես միայն մի բան լավ դիտեմ, վոր իմ վախճանը կը լինի վողբերդական. յես նախազգում եմ, վոր նա հեռու չե։ Մի միակ փափագ ունեմ այժմ. տեսնել դարձյալ մի անգամ Մարտոյին և լսել նրանից ընկերական սիրո խոսք, նույնիսկ կշտամբանք։ Ո՛, կյանք, վորքան քաղցր ես յեղել ինձ համար, բայց վորքան անողոք, դժոխային այժմս։ (Խելացնորի սկսու)։ Բարի մարդիկ, ընկերներ, հասեք, հասեք ինձ շուտուփույթ ոգնության։ (Չայնը խեղղվում է, ուժասպան, զըեթե անզգայության մեջ՝ ընկնում է աթոռի յեվ սեղանի վրա. Շուրան վրա յե հասնում, սարսափահար և լինում, զանելով նրան այդ վիճակում):

ՇՈՒՐԱ. — Վայ, Լիզա ջան, Լիզա ջան, այդ ի՞նչ որի յեմ տեսնում քեզ... (Հասնում է ոգնության):

Վ Ա Բ Ա Գ Ո Ւ Յ Ռ



ՊԱՏԿԵՐ ՅԵՐԵՒԱՌԻ

Լիզայի և Շուրայի նույն խրճիթ-բնակարանը.

Լիզան մահճակալում պառկած՝ անհուսալի դրության մեջ քնած է, յերբեմն շնչառության ժամանակ լսվում են ինչ վոր անսովոր ձայներ. սեղանի վրա կա մի շիշ (կաթով), բաժակ, դեղի սրվակներ:

Շուրան մահճակալի մոտ նստած՝ անձնվիրաբար հսկում է. վոտի կանգնելով այլայլված՝ սկսում է խոսել հազիվ լսելի ձայնով:

ՇՈՒՐԱ. — Ասոված իմ, կարծես բանը բանից արդեն անցել ե. մոտ յերկու ամիս այսպես շարունակ հիվանդ և հիվանդ — ինչով, արագընթաց բարակացավով։ Վոտներն արգեն ուռել են. բժիշկը և Անաստասիա Պավլովնան արդեն ձեռք են քաշել, ասացին՝ այլես փրկություն չկա. (առանձին շեշտով). փրկություն չկա այլես։ Լիզայից պետք ե բաժանվենք, նրա մահը ոլետք ե տեսնենք այսոր վաղը. նա և յերեխան միասին... ո, դժոխային միտք. ո, մարդկային չար վոգիներ. խնդացեք, հրճվեցեք այս չքնաղ հեղափոխականի մահով. սա ձեր զոհն է, ձեր ցնծության առարկան։ (Մտնում ե Անաստասիա Պավլովնա):

ԱՆ. ՊԱՎԼ. — Բարե՛, ընկեր Շուրա, ի՞նչպես ե հիվանդը. (մոտենում և յեկ նայում). նա քնած է. բունն ի՞նչպես ե:

ՇՈՒՐԱ. — Շատ անհանգիստ։

ԱՆ. ՊԱՎԼ. — Ի՞նչպես ե խոսում։

ՇՈՒՐԱ. — Մեծ դժվարությամբ. դիտակցությունը տեղն է։

ԱՆ. ՊԱՎԼ. — (Նայու և Հիգայի յերեսին). զգուշությամբ վերտիսկը բարձրացնուի և ոստած վոտները տեսնելու). լավ չե, բնիկը Շուրա, Իհղայի դրությունը. ծանր և ասել, բայց պետք և ասեւ, վոր նըտ կյանքի վերջին բոպեներն են. Արագընթաց բարակացավը մի անտառնելի, անբուժելի հիվանդություն է:

ՇՈՒՐԱ. — ՄԵՐԵ ողնության վոչ մի ճար չկա:

ԱՆ. ՊԱՎԼ. — Վոչ մի:

ՇՈՒՐԱ. — Սոսկալի և այդ:

ԱՆ. ՊԱՎԼ. — Շատ ցավալի յե, բայց այդպես և. Այդ բարակացավը հաճոխակի յերեսությ և այստեղ Սիրիրի յերկրներում. Նո շատ դոհեր և տանում տռութելապես թույլ թոքերի և կազմվածքի տեր և տաք կլիմային սովոր հարավային, բնակիչներից:

ՇՈՒՐԱ. — Լիդան ուկրույինցի յե, այնքան ևլ տաք յերկիր չե Ռուկրայնան:

ԱՆ. ՊԱՎԼ. — Բայց ելի Սիրիրի հետ համեմատած՝ հարավային յերկիր կարելի յե համարել:

ՇՈՒՐԱ. — (Խորին վշտով): Բնիկ. Առ. Պավլովնա, հաշտվել այն մտքի հետ, վոր Լիդան վաղն այլես մեղ հետ չի վնելու, յես չեմ կարողանում... Նո միակն եր մեր կին ընկերների մեջ, սկաշտելի ասենքին և մանավանդ բանվորներին. Հկա մեկը ներկայումս, վոր նըտ փոխարինել կարողանա.

ԱՆ. ՊԱՎԼ. Անտորակույս կորուսոր շատ ծանր կլիմի: (Մանու և Ավոտիան):

ԱՎԴԻՑԻԱ. — (Տաշով Շուրային նամակ). Որիորդ, այս բոպեյիս նամակը բերեցին ձեզ համար:

ՇՈՒՐԱ. — Շնորհակալ եմ, Ավդոտիա. (Վերջինս դուքս ե զնում. Շուրան, արագ պատելով ծրաբը՝ նայու և նաւակի ծեռագրին լեզ ասորդգրությանը). Մարտոյից և նամակը (մի քանի վայրեցան կարդում և մտքում): Ո՞վ իմ Աստված, ինչ վողբերզական մոմենտ. Կա յերեխի ինքը շու-

տով այստեղ կը լինի. գրում ե, վոր այս նամակի հետ թերես միաժամանակ ինքն ել մեզ մոտ լինի: Նա գալիս ե վոչ միայն տեսնելու, այլ և փրկելու:

Ան. ՊԱՎԼ. — Ի՞նչպես թե փրկելու:

ՇՈՒՐԱ. — Հասկանում եք, ընկեր Ան. Պավլովնա, նրան հայտնի չե սրա արագընթաց թոքախտով հիվանդ լինելը. մինչև այդ՝ յես նրան գրել եյի, վոր Լիզան բոլորովին ընկճված՝ ֆիզիքապես քայքայվում, մաշվում ե, վոր այդ դրության մեջ նա կտրող ե տրագիքական վախճան ունենալ, յեթե ուժեղ մի ձեռք չհասնի ժամանակին նրան ողնության: Մարտոն վճռել ե իրեն զոհաբերել Լիզային. նա գալիս ե նրա ընկերամուսինը և յերեխայի հայր ու խնամակալը լինելու առաջարկով. բայց վորպիսի տրագիզմ, յերբ կը տեսնի Լիզային որհասական վիճակում. (այդ սուպերին Լիզան, տարօրինակ ծայներ հանելով՝ աշերը բացում ե. Շուրան ինվ Ա. Պավլովնան մոտենում են):

ՇՈՒՐԱ. — Լիզա ջան, Լիզա ջան:

ԼԻԶԱ. (Թուլացած ձեռքով թեթել հուսահառական շարժում և անում). Եհ, Շուրա, Մարտո...

Ան. ՊԱՎԼ. — (Շուրայի ականջին փսխալով). Ընկեր Շուրա, յես նրան շատ վատ եմ գտնում, գրեթե հոգեարքի մեջ:

ՇՈՒՐԱ. — Ո՞, սարսափ (դառնալով Լիզային): Լիզա ջան, Մարտոն, հա Մարտոն գալիս ե, նամակ ե գրել:

ԼԻԶԱ. — Մարտոն, ախ, Մարտոն, նամակ...

ՇՈՒՐԱ. — Այո, նամակ, գալիս ե...

ԼԻԶԱ. — (Վերջին խոսքերից նա ցնցվում և վորպես զալվանական հոսանքից): Ահ, կարդա:

ՇՈՒՐԱ. — (Կարդում ե ծանր): «Միրելի Շուրա, ստացա քո վերջին նամակը, վորն ինձ կատարելապես ցնցեց: Դու գրում ես, վոր ուժեղ մի ձեռք միայն կարող ե նրան «փրկել»: Հայտնիր Լիզային, վոր վճռել եմ ինձ զոհաբերել նրան. նրա կյանքը բանվորության կանքն ե. նրանց

միմյանցից բաժանել չի կարելի։ Յես վճռեցի դալ և առաջարկել Լիզային նրա ընկեր-ամուսինը լինելու, նրանից ծնվելիք մանկան հայր և խնամակալը լինելու։

ԼիԶԱ. -(Ծնցվելով) Ամուսին, հայր...

ՇՈՒՐԱ. (Ծարունակում ե): Բարոյական այդ պարտքն ինձ վրա յեմ առնում։ Դրանից կը շահվի անկասկած մեր հեղափոխական-քաղաքական գործը։ Լիզան սույն և մեր կին-ընկերների շարքում։

Հայտնիք նրան իմ այս վճիռը։ Մերժումը նրա կողմից անսպասելի կը լիներ։ Այս նամակն ուղարկում եմ, միևնույն ժամանակ գալիս եմ և յես։ թերեւ միաժամանակ լինենք ձեզ մոտ, նամակս և յես։

Ընկերական ջերմ համբույրներով

ձեր Մարտուն

ԼիԶԱ.-(Նվազած ծայնով): Ահ, Մարտուն... (Այդ ըստելին տանտիրուհի Ավոտիայի սենյակից խոսակցության ծայներ են լսվում):

ՄԱՐՏՈՒՆ.-Տիկին Լիզան և որիորդ Շուրան այստեղ են բնակվում, տանն են արդյոք։

ԱՎԴԻՇԻԱ.-Եյտեղ են. բայց աիկ. Լիզան պառկած անկողնում անհուսալի հիվանդ դրության մեջ եւ։

ՄԱՐՏՈՒՆ -Ինչպես, անհուսալի հիվանդ...

ՇՈՒՐԱ.-Ախ, Մարտունի ծայնն եւ, Մարտոն եւ։

(Մարտոն մտնում է Ավոտիայի հետ. Շուրան դիմավորում և նրան լացի ծայնով. Մարտոն արագաքսով զնում և դեպի մահճակալը յեվ փարվում Լիզային):

ՄԱՐՏՈՒՆ.-Լիզա ջան, ի՞նչ եւ պատահեր

ԼիԶԱ.-(ծանաշելով Մարտոյին՝ մեռելային ծայնով) Մարտոն, դու... այստեղ...

ՄԱՐՏՈՒՆ.-Այս, յես եմ, Լիզա ջան, դու բոլորովին

անճանաչելի յես դարձել։ (Դառնալով Շուրային յեվ համբուրվելուց հետո նրա հետ, խորին ցավի յեվ կշտամբանքի շեշտով ասում և նրան): Ընկեր Շուրա, ինչպէս դուք առաջ չհաղորդեցիր ինձ բոլորը ճշտությամբ։

ՇՈՒՐԱ. (Ընկերած ժայնով): Մարտո ջան, մոտ ժամանակներս արագընթաց թոքախտի պատճառով՝ նրա դրությունը սաստիկ ծանրացավ. բժիշկը և Անաստասյա Պավլովնան (Շուրան ցոյց եւ տալիս վերջինիս վրա, Մարտոն մեկնում և ձեռքը յեվ ծանոթանում) առանձնապես խնամում եյին. բայց վոչինչ դուրս չեկավ (հեկեկալով): Մարտո ջան, Լիզան իր կյանքի վերջին բոպեներն եւ ապրում։ Ան. ՊԱՎԼ. — Այն, հոգեարքի մեջ եւ։

ՄԱՐՏՈ. — (Ցնցված վերջին խոսքերից): Կյանքի վերջին բոպեները... ոհ, անբախտ մարդ, անողոք կյանք... (Նայելով Լիզային) Լիզա ջան (բայց Լիզան լուռ եւ, չի արձագանքում): Լիզա ջան։ (Մահվան բոլեն, աշքերը փակում եւ, արդեն մահացավ. Շուրան յեվ Ան. Պավլովնան սեղմ մոտենում են մահճակալին):

Ան. ՊԱՎԼ. — Ընկերն արդեն մահացավ։

ՄԱՐՏՈ. — Մահացավ, Լիզան մահացավ (Շուրան, Ան. Պավլովնան վողքում են, Ավղոտիան արտասկում եւ):

ԱՎԴՈՏԻԱ. — (Խորին կարեկցությամբ). — Իմ խեղճ բարի տիկին։

ՄԱՐՏՈ. — Զկա այլկա Լիզան. ո, խեղճ ընկեր, բազմաշխատ, անգնահատելի ընկեր, վորքան դու տանջվեցիր բարբարոսների ձեռքից. (Շուրան ընկել եւ աթոռի վրա, թաշկենակը աշքերին չեւ կարողանում զագել իր կուկիծնու հեկեկանքը. Ան. Պավլովնան մի կողմը քաշված՝ սաստիկ հուզված եւ յերեվում. Մարտոն կարծես հավասարակըշությունը կորցրած՝ հոսահատական շարժումներ և կատարում. Ավղոտիան շարունակ կանգնած դուն մոտ գողնոցվ յի օքնմն աշքերն եւ սրբում):

ԱՆ. ՊԱՎԼ. — Յես կերթամ անմիջապես այս տխուր դեպքը հաղորդեյու ընկերներին (պատրաստվում ե զնալ-նրա հետ դուրս ե զնուտ Ավղոտիան. Շուրան Լիզայի դիա-կի վրա ընկած շարունակում ե վողքի հուահատական ծայներ հանել. Մարտոն վշտահար նայուտ ե շարունակ անշնչացած Լիզային):

ՄԱՐՏՈՆ. — (Զգաստացած, խորին հուզմոնքով): Դար-ձյալ մի պայծառ ասադ մարեց .. E pur si muove Révo-
lution... *)

Վ. Ա. Բ Ա Գ Ո Ւ Յ Ռ



*) «Բայց և այնպիս նու — հեղափոխությունը — շարժ-
ում ե...»:

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Բանվորների ապահովագրությունը Արևմտյան Յեղոալայում և Ռուսաստանում», Թիֆլիս, 1894 թ.
2. «Փուչ զավակ» դրամա 5 դորժ, » 1905 »
3. „Рабочее движение и социал-демократия на Кавказе“ с предисл. Г. В. Плеханова
I изд. Женева, 1910 г.
II изд. (Госиздат.) Москва, 1923 г.
4. «La guerre actuelle et le socialisme»
Լա Շո-Դը-Ֆոն (Շվեյցարյա) 1915 թ.
5. «Անցյալի հիշողություններից», Թիֆլիս, 1918 թ.
6. «Անդրկովկասի քաղաքական կյանքը 1918 թվին», Թիֆլիս, 1919 թ.
7. „Записки Революционера“, непериодическ. издание № 1,
Тифлис 1920 г.
8. „Материалы по истории отпадения Закавказья от России“
Тифлис, изд. „Красн. Кн.“ 1923 г.
9. «Բայց և այնպես նա շարժվում է» (Երբ ՏԻ տառե...), դրամա 4 դորժ., Սիբիրի քաղաքական աքսորյալների կյանքից. Թիֆլիս, 1925 թ.

Պատրասխան և ապագաւորյան յեկ օպերավ լույս կը տեսնի ենթինակի
«МИРОВАЯ ВОЙНА И СОЦИАЛИЗМ»
 թարգմ. Գրանսաերենից

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0026952

5n.

ԳԻՒՆ Ե ՀՈ ԱՅՍ

11
3237

285
5-1